4878

891·85
0-30

2003

9011

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 165

ԷԼԻԶԱ ՕԺԵՇԿՈ

ՀԶՕՐ ՍԱՄՍԱՆ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի

Тип. М. Вартанянца, Вельям. ул. д. № 7.

1899

891.85
O-30

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 165

891.85-3
Ա-30
Սպ. ԷԼԻԶԱ ՕՓԵՇԿՈ

ՀԶՕՐ ՍԱՄՍՈՆ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

ԱՌԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի
Тип. М. Вартанянца, Вельям. ул. д. № 7.
1899

1504
9

Дозволено Цензурою, Тифлисъ, 13 Іюня 1899 г.

ՀԶՕՐ ՍԱՄՍՈՆ

Եթէ, ընթերցող, դուք երբևիցէ կամենաք գտնել «ՉՀՈՒԴ» բառի նոյնանիշը՝ վերցրէք մի պատմական բառարան, քաց արէք նրա մէջ «Կ» տառը, և երբ գտնէք Կրեսոս անունը՝ տակը խազեցէք—դուք գըտակ ձեր փնտռածը։ Կրեսոս՝ ՉՀՈՒԴ բառի հոմանիշն է։ ՉՀՈՒԴ և Կրեսոս—բոլորովին միևնոյնն է։ Ամեն մարդ լաւ գիտէ, որ հրէաների գլխաւորներն են Ռոդշիլդներն և ապա ուրիշ բանկիրները, որոնք—Ասուած գիտէ—քանի-քանի միլիոնների, նկարներով, արձաններով ու հայելիներով լի պալատների տէր են։ Այստեղից էլ ուղիղ կարելի է գալ այն եզրակցութեան, ինչպէս երկու անգամ երկու՝ չորս, թէ Ռոդշիլդներին և բոլոր միւս բանկիրներին ծնող ցեղը շատ հարուստ է և ապրում է միլիոնների, արձանների, պատկերների ու հայելիների մէջ. իսկ եթէ այդ ցեղի

զաւակներից մէկն ու մէկը չէ լողում ճոխութեան մէջ՝ դա միայն այն պատճառով, որ ինքն չէ կամենում, բայց եթէ կամենայ՝ անպատճառ կհասնէ իւր ուզածին։

Հարուստ ցեղ և, իհարկէ, բախտաւոր ցեղ։ Ես կատարելապէս հաւատում եմ նրա բախտաւորութեան. բայց զարմանում եմ միայն մի բանի վրայ, թէ ինչո՞ւ Հերշունի որդին և Ցիպայի ամուսին Շիմշելը՝ ամենևին ոչինչ չգիտէ այդ հարստութեան և դրբանից բղխող բախտաւորութեան մասին։ Սկզբում ես կարծում էի, թէ Շիմշելը դիտմամբ է աղքատ ձևանում, որպէսզի աւելի լաւ յիմարացնէ «Գոյերին» *), որոնցից մէկին նա անշուշտ ընտրել է իւր համար զոհ, որին դատապարտել և վաճառել է Նոնան Կագալի վարչութիւնը (չէ՞ որ վերջին ժամանակ մեզանում այնքան շատ խօսուեց Մերօպիաների մասին**)։

*) Գոյ—այսպէս են կոչում հրէաներն անհաւատներին—քրիստոնեաներին։

**) Հրէաների մէջ Մերօպիա ընդհանրապէս նշանակում է ծանօթ, իսկ մասնաւորապէս՝ կլիենտ, որի հետ հրէան առևտրական գործեր է վարում։

Բայց որքան մեծ եղաւ իմ զարմանքը, երբ աւելի ուշագ քննութիւնից յետոյ ես համոզուեցի, որ Շիմշելն իսկապէս ոչ մի Մերօպիա չունի, իսկ հարստութեան, իբրև երջանկութեան աղբիւրի մասին, նա ոչ մի հասկացողութիւն չունի։ Ինչ վերաբերում է ոսկեզօծ կահկարասիքին, արձաններին և հայելիներին՝ ես կասկածում եմ թէ Շիմշելն իւր ամբողջ կեանքում երբևիցէ այդ բաները տեսած լինի, եթէ հայելի չհամարենք քառորդ արշինաչափ ապակու այն կտորը, որը փայտեայ հասարակ շրջանակով առանց որևէ ոսկեզօծութեան կախ է տուած Ցիպայի պահարանի վերևում և դէպի որը Եսթերիկը, Շիմշելի վեցամեայ աղջիկը,

եթէ կլիենտը նոյնպէս հրէայ է. իսկ եթէ Մերօպիա—կլիենդը լինում է ոչ հրէայ՝ այն ժամանակ հրէական Կագալը, հրէաների մէջ մրցութիւն առաջ չբերելու համար, այդպիսի Մերօպիային յանձնում է մի հրէայի բացառիկ յանդգնութեան, որոշ վճար ստանալով յօգուտ Կագալի։ Այսպիսով առաջ է գալիս մի տեսակ պայման, որի զօրութեամբ Կագալի կողմից իբրև Մերօպիա վաճառուած անձը չէ կարող ոչ վաճառել և ոչ գնել առանց այն հրէայի միջնորդութեան, որ նրա վրայ Մերօպիայի իրաւունք է ձեռք բերել։

օրական մի քանի անգամ մագլցելով բարձրանում է, որպէսզի զուարճանայ իւր կապոյտ աչքերով և հրագոյն գանգուրներով։

Ուրիշ հայելիների մասին Շիմշելը ոչինչ չգիտէ բացի այն հայելուց, որի մէջ շարունակ ցոլանում է կեղտոտ պատի մի մասը և Եսթերիկի դուրս ցցուած քիթը, ինչպէս նա չգիտէ նաև շատ ամենահասարակ բաների և երևոյթների մասին։ Ես ամօթով պէտք է խոստովանիմ, որ իմ վէպի հերոսի գիտութեան շրջանը շատ նեղ է։

Սակայն իւր սենեակը, որ տասը քայլ երկայնութիւն և հինգ քայլ լայնութիւն ունի՝ նա շատ լաւ ճանաչում է, առաջին՝ այն պատճառով, որ ապրում է նրա մէջ տասն և երկու տարի, երկրորդ՝ որ այնտեղ ոչինչ չկայ, բացի երկու մահճակալից, ծածկուած ճակնդեղագոյն վերմակով, մի ահագին վառարանից, անգունդի նման սև հնոցով, մի լուսամուտից, կիսով չափ փտած շրջանակով, մի սեղանից, երեք աթոռից, մի կատուից և հինգ երեխաներից։

Իւր երեխաներին Շիմշելը շատ լաւ է ճանաչում, որովհետև նրանց սաստիկ սիրում է։ Վերջապէս ինչպէս կարող է չսիրել նրանց, երբ այդ երեխաները միանգամայն

զարմանալի են, զարմանալի գեղեցիկ, զարմանալի խելացի և բարի։ Իսկապէս այդ մասին խօսելն էլ աւելորդ է, սակայն Ցիպան շատ յաճախ է խօսում, և Շիմշելը երբէք չէ վիճում նրա հետ։ Ընդհակառակը, նա ինքն էլ խորապէս զգում է իւր երեխաների բոլոր արժանաւորութիւնները և Ցիպայից ոչ պակաս զմայլում է նրանց վրայ, թէև լուռ կերպով, հակառակ իւր ամուսնու շատախօսութեան։

Այդ երեխաներից ամեն մէկը որքան մխիթարութիւն է պատճառում նորան։ Եսթերիկն օրինակ... դա կրակ է, հօ երեխայ չէ։ Ոտնամաններ նա միմիայն շաբաթ օրերն է հագնում և այն էլ ինչպիսի ոտնամաններ. հին շորեր վաճառող պառաւի զամբիւղից հանուած այդ ոտնամանները, որ առաջ մի որևէ հարուստ երեխայ հագել մաշել է, երբեմն ատլասից կամ բարակ սեկից կարուած, երբեմն կապտագոյն կամ ծիրանի, բայց միշտ կարկտած ու պատառոտած։ Սակայն ոտնամաններով թէ առանց ոտնամանների՝ նրա փոքրիկ ոտիկները անդադար պտտւում են սենեակի մէջ, բարձրանում են մօր պահարանի վրայ, ցատկոտում են բակի սալայատակի վրայ կամ ցանկա-

պատից քաշ են ընկնում հարևանի բակը։ Նրա շարունակ խճճուած մազերը համարեա բոլորովին ծածկում են նրա փոքրիկ կլոր դէմքը բուստանման շրթունքներով։ Այսպէս է Եսթերիկը, Շիմշելի երրորդ զաւակը, ըստ կարգին։

Հիանալի զոյգ է կազմում նրա հետ Մէնդելը, նրա հինգ տարեկան փոքրիկ եղբայրը, իւր մի քանի բնորոշ գծերով։ Սա կրում է վարդագոյն կտաւից կարած բաճկոն, որից քաշ են ընկած սպիտակ ժապաւէններ։ Մէնդելը շարունակ կոխ է տալիս այդ ժապաւէնները, յաճախ վայր է ընկնում և իւր սուր ճիչերով թնդացնում է ամբողջ սենեակն ու նեղ բակը։ Բայց որովհետև այդ ճիչերի վրայ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում՝ ուստի Մէնդելը շուտով լռում է, և ինքն իրան բարձրանում է գետնից, ուղղում է գլխարկը իւր հրագոյն, երկար մազերի վրայ, որոնք նման են քրոջ մազերին, և Եսթերիկի ընկերակցութեամբ սկսում է նորից ցանկապատների, աղբակոյտների և ճօճուող տախտակների վրայ կատարել մի տեսակ լարախաղական վարժութիւններ։ Շիմշելը լուսամուտից նայում է մանուկներին խաղաղ, ուրախ ժպիտով։ Աւա՜ղ,

Մէնդելի համար շուտով կվերջանայ անսահման ազատութիւնը և անդորր ուրախութեան ամենալաւ շրջանը։ Երկու ամսից յետոյ կը լրանայ նրա հինգ տարին, և նա պէտք է սկսի գիտութիւնների կանոնաւոր դասընթացը։ Նա առանց այդ էլ շատ յետ է մնացել։ Մի տարի առաջ նրա և ծնողների մէջ բանակցութիւններ տեղի ունեցան խէդէրը (դպրոցը) յաճախելու վերաբերմամբ։ Այդ ժամանակ Մէնդելը ոչ մի կերպով չընդունեց առաջարկուած պայմանները. նա չէր ուզում գնալ խէդէր. պրծաւ-գնաց։ Երկու թաթիկներով մօր շրջազգեստից կախուելով՝ նա նստեց գետնին, ոտքերը դէմ տուեց, սկսեց յուսահատ լալ և չգնաց։ Սկզբում Ցիպան բարկանում յուսահատւում էր, տեսնելով իւր չորս տարեկան որդու այդ զզուանքը դէպի գիտութիւնն ու նրա ներկայացուցիչը, դէպի այն երկար մօրուքով, կորացած մէջքով և խիստ հայեացքով մելամեղը (ուսուցիչը), բայց Շիմշելն շտապեց մխիթարել նրան.

—Երբ ես նրա տարիքն ունէի՝ նոյնպէս վազվզում էի փողոցներում և խաղում էի հասակակիցներիս հետ... բայց տեսնում ես ինչի՞ եմ հասել այժմ... նա էլ մի օր կը հասնէ, իսկ այժմ թող դեռ մեծանայ։

Բայց Շիմշելի աւագ որդին, իննամեայ Ենովքը, հինգ տարի է ահա որ այցելում է խէդերը, կարողանում է լաւ կարդալ հին հրէական լեզուով, մեծ հմտութիւն է ձեռք բերել Հումելի կամ Մովսէսի Հնգամատեանի մէջ և սրանից մի տարի առաջ արդէն ոտք կոխեց գիտութեան բարձրագոյն աստիճանի վրայ—նա սկսեց սովորել Թալմուդը։

Զլսու�՝ յաջողութիւն։ Զարմանալի չէ ուրեմն, որ վայելչահասակ մանկան սև ու անսովոր կերպով չռած, խոր ընկած աչքերը նիհար, գունատ դէմքի վրայ վառւում են մի տեսակ այրող և միևնոյն ժամանակ տխուր կրակով, ասես թէ շարունակ վշտանում և ցաւում են մի ինչ-որ բանի համար։ Սկզբում փոքրիկ Ենովքը գանգատւում էր իւր մելամեդի խստութիւնից և ցոյց էր տալիս անգութ կերպով քաշքշուած իւր ականջները։ Նա կամայուկ ասում էր մօրը, թէ իւր ուսերն ու գլուխը ցաւում են, ուսերը՝ մելամեդի հարուածներից, իսկ գլուխը՝ ուղեղը ծանրաբեռնող գիտութիւնների առատութիւնից։ Բայց Ենովքի գանգատները բանի տեղ չանցան և շուտով ընդհատուեցին։ Ենովքի մելամեդը Օնգրոդ քաղաքի մելամեդներից ամենաէժանն էր։

Զնայելով որ Բոդշիլ՚դներն և ուրիշ բանկիրները պատկանում են հրէական ցեղին, այնու ամենայնիւ Շիմշելն ու Ցիպան անկարող էին դասագին վճարել այնպիսի մելամեդի, որ իւր գիտական հմտութիւնների հետ միասին ունենար և հեզութիւն։ Այդ պատճառով Ենովքը, չնայելով իւր յառաջադիմութեան՝ չունէր այն ներքին գոհունակութեան զգացմունքը, որ սովորաբար ունենում են գիտութեան ասպարէզում բախտաւորները։ արտաքուստ նա ամենևին նման չէ ո՛չ երջանիկ, ոչ էլ առողջ երեխայի։ Խէդերից վերադառնալով՝ նա սովորաբար նստում է սենեակի մի անկիւնում յատակի վրայ, քաշում է ճակատի վրայ իւր մաշուած գլխարկը (նա շատ ջերմեռանդ է, և ոչ մի րոպէ գլխաբաց չէ մնում) և խոր մտածմունքի մէջ՝ փայտով քերում է յատակը ծածկող աղբը կամ շոյում է կատուին, նայելով նրա աչքերին իւր տխուր մեծ աչքերով։ Փոքրիկ կատուն, որին մի ժամանակ փողոցից բերել է Ցիպան՝ այժմ մեծացել է և բացի Ենովքի համակրութիւնից, վայելում է նաև մի ուրիշ անձի համակրութիւնը։

Այդ անձը Շիմշելի մեծ աղջիկն է, տասնամեայ, վայելչահասակ, նիհար Լիբան,

որ միշտ հազում է։ Նրա դէմքը հիւանդի գունատութիւն ունի, և բաց մոխրագոյն աչքերի արտայայտութիւնը վկայում է, որ նա գիտէ տանջանքը համբերութեամբ կրել։ Նրա վուշի գոյնի մազերը յետևում հիւսուելով կազմում են մի կարճ ծամ։ Նա համարւում է հասած աղջիկ, տնտեսութեան մէջ փոխանակում է մօրը և վերջինիս յաճախակի բացակայութեան միջոցին խնամում է ընտանիքի փոքրահասակ անդամներին։ Նա վառում է վառարանը, ջուր է բերում մօտակայ ջրհորից, պատրաստում է կերակուր, շաբաթը մի անգամ աւելում է յատակը և օրական հարիւր անգամ անախորժութիւններ կրում Եսթերիկի և Մէնդելի երեսից, որոնց նա շարունակ ստիպուած է փնտռել, կանչել, մխիթարել կամ յանդիմանել։ Եւ այս բոլորը չեն արգելում նորան՝ բրդեայ գուլպաներ գործել։ Ահա վեց տարի է արդէն, որ նա գուլպաներ է գործում թէ մօր համար, թէ իւր համար և թէ ամբողջ ընտանիքի համար, իսկ տնտեսական ծանր ճգնաժամերում նաև վաճառելու համար։ Երբեմն սաստիկ յոգնածութիւն զգալով՝ նա նստում է ցածրիկ աթոռի վրայ վառարանի մօտ և ձեռները կախ է ձգում ծնկների վրայ։ Բայց

նրա հանգստութիւնը երկար չէ տևում։ Ամենից յաճախ հէնց այդ րոպէներում երկամեայ Լէյզերի խելքին փչում է անցուդարձ անել սենեակում։ Նա փայլում է եռանդով, շարժում է ձեռները, ապա վայր է ընկնում, սկսում է ճռալ, ու Լիբան վեր է կենում, բարձրացնում է նրան գետնից և օրօրում է այնքան ժամանակ, մինչև որ երեխան հանգստանում է և սկսում ժպտալ իւր վրայ կռացած քրոջ երեսին։ Այն ժամանակ Լիբան դնում է նրան օրօրոցի մէջ և փորձում է հեռանալ, բայց Լէյզերը մի նոր ողբաձայն ճիչով ցանկութիւն է յայտնում, որ նա իւր մօտ մնայ։ Օրօրոցը կախուած է Լիբայի մահճակալի մօտ, մահճակալը առանց այն էլ բարձր է, բայց աւելի բարձր է երևում իւր վրայ դարսած փետրալից դօշակներից։ Զը նայելով իւր հասակին՝ Լիբան դժուարանում է բարձրանալ մահճակալի վրայ. նա մի կերպ մագլցելով բարձրանում է, նստում է դօշակների վրայ, ոտքը յենում է օրօրոցի եզրին, մի կողմից գուլպայ է գործում և միւս կողմից լաւ հսկում է Լէյզերի վրայ, որ թէև նիրհում է՝ բայց ժամանակ առ ժամանակ այնու ամենայնիւ բաց է անում աչքերն իմանալու համար, չհեռացա՞ւ արդ-

դեօք քոյրն իւր մօտից։ Զգիտեմ, արդեօք ե-
բեխայի քնաթաթախ աչքերը նկատում են,
թէ ինչպէս որոշ ու միևնոյն ժամանակ
ինչպէս տարօրինակ է երևում աղջկայ գը-
լուխն իւր գունատ դէմքով և խոնարհած
արտևանունքներով, նրա չորս կողմը բարձրա-
ցող դօշակների և բարձերի ճակնդեղագոյն
ֆօնի վրայ։

Այսպէս են Շիմշելի երեխաները. իսկ ո՞վ
է ինքը Շիմշելը։ Ո՞վ է նա, այսինքն ի՞նչ
ծագումից է և ինչ դիրք ունի հասարակու-
թեան մէջ։

Ես չեմ կարող ձեզ ասել, թէ ո՞վ է
Շիմշելի հայրը։ Հաւանաբար նա ջրկիր կամ
կօշկակար է եղել։ Ոմանք ինձ այսպէս են
ասել, ոմանք այնպէս, թէև ամենքն էլ մի
կէտում համաձայն են, որ նա, երևի, շատ
աղքատ է եղել, քանի որ իւր որդին կրթու-
թիւնը սկսել է Տալմուտօրում, այսինքն ձրի
դպրոցում։ Նրա հասարակական դիրքը պէտք
է որ շատ բարձր լինի. յիշեցէք թէ ինչ-
պէս Շիմշելն ասում էր իւր կնոջ. «ահա թէ
ես ինչի՞ եմ հասել»։

Այն մարդը, որ արտասանում է այս
խօսքերը հպարտութեամբ և ինքնաբաւակա-
նութեամբ՝ իհարկէ իրապէս հասած կլինի

մի կարևոր դիրքի։ Շիմշելն այնպիսի դիրք
ունի, որը մենք բոլորս սովոր ենք բարձր
համարել, մի դիրք, որ զարթեցնում է ընդ-
հանուր յարգանք, նա... Ես իհարկէ կզար-
մացնեմ ձեզ, երբ ասեմ, որ Շիմշելը գի-
տնական է։ Սա բոլորովին չի հակասի իմ
նախկին խօսքերին, թէ Շիմշելի ուսման
և փորձառութեան շրջանը խիստ նեղ է՝ ե-
թէ դուք մի րոպէ դուրս ձգէք ձեր յիշողու-
թիւնից բոլոր ձեզ յայտնի համալսարանները,
ճեմարանները, ինստիտուտները, որոնք տալիս
են իրանց ուսերին գիտնականութեան վկայ-
ականներ, գիտութեան այս և այն, ձեզ թէ-
կուզ անունով միայն յայտնի ասպարէզում։
Այն հաստատութիւնները, որտեղից Շիմշելը
ձեռք է բերել իւր հմտութիւնները՝ կոչւում
են՝ Տալմուտօր, Էշիբօտ և Բիդ—խա—միդ-
դրաշ, այսինքն տարրական ուսումնարան,
գիմնազիա և համալսարան։ Բոլոր հրէաները
յաջորդաբար չեն անցնում ուսման այդ բո-
լոր աստիճանները. կան այնպիսիները, որոնք
անընդունակութեան կամ ուսման սէր չու-
նենալուն համար կանգ են առնում առաջի-
նում կամ երկրորդում։ Շիմշելը կանգ չա-
ռաւ և անցաւ բոլորը։ Մինչև իսկ աւելի.
վերջացնելով ամբողջ դասընթացը և տասն-

ուրթ տարեկան հասակում ամուսնանալով՝ նա այնու ամենայնիւ շարունակեց իւր ուսումը։ Նա նոյն-իսկ այժմ այցելում է Բիդ—խա—միդրաշը, սովորում է և ամբողջ գիշերներ իւր սենեակի մէջ նստում է սեղանի առաջ։

Ի՞նչ է ուսումնասիրում նա։ Իւր կրօնը, նրա պատմութիւնը, որ չափազանց հարուստ է, նրա բնազանցութիւնը և նրան զարդարող աւանդութիւնները, զրոյցները, ակսիոմաները, լեկենտաները, որոնց մեծ մասը—չգիտեմ կհաւատամք դուք ինձ,—կարող են հաւասարուել մարդկային մտքի մարգարիտներին։ Շիմշելը... ի՞նչպէս աւելի պարզ ասեմ... աստուածաբան է և բնազանցութեան փիլիսոփայ, որոշ չափով պատմաբան է, գոնէ այն մասում, որ սերտ կապով և անմիջապէս շաղկապուած է հրէական ազգի անցեալի և նրա կրօնի հետ։ Գիտութեան այս շրջանից դուրս նա կատարելապէս ոչինչ չը գիտէ. նա միայն իւր մասնագիտութեան մէջ է կատարելագործուում և դրանից դուրս միանգամայն ոչինչ չէ անում։ Գիտական պարապմունքները, որոնք ոչինչ ընդհանուր բան չունին առօրեայ կեանքի պահանջների հետ, անշուշտ Շիմշելին և նրա հինգ երե-

խաներին կհասցնէին ամենայուսահատ դրութեան՝ եթէ որ նա իւր կեանքի տասնութամեայ հասակում չամուսնանար տասնվեցամեայ Ցիպայի հետ։ Ցիպան մի համեմավաճառի խանութում գործակատարուհի էր. շատ լաւ գիտէր վաճառականական բոլոր մեքենայութիւնները և դառնալով (ի շնորհս իւր տանտիկնոջ խնամախօսութեան) գիտնականի կին՝ այնպէս բախտաւոր և այնպէս փառաւորուած զգաց իրան, որ ամբողջ հոգով և մարմնով, հոգատար և անհամարձակ սիրով, անվերջ յարգանքով, անսահման անձնազոհութեան բուռն ծարաւով անձնատուր եղաւ այն մարդուն, որ պարգևել էր նորան երկնային երջանկութիւն։ Շիմշելը, ջրկիրի կամ կօշկակարի որդին, ձրի դպրոցի աղքատ աշակերտը, որ ոչինչ չունէր, բացի երկու հարիւր ոսկուց *), այն էլ նուիրատուութեամբ հաւաքած, այնու ամենայնիւ ջահել աղջիկների և նրանց հայրերի աչքին այնպիսի փեսացու էր համարւում, որ երբ նրա ամուսնանալը յայտնի եղաւ՝ բոլորը միասին նախանձում էին ջահել գործակատարուհու

*) Երկու հարիւր ոսկի=30 ռուբլու։

Հ.Ս.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/31 г 1922
Ереван, Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

բախտին։ Ցիպայի մայրը փողոցներում բանջարներով լի ծանր կողովներ էր շրջեցնում, իսկ քոյրերը ամուսնացան դերձակների, ատաղձագործների և դրանց նման կոպիտ արհեստի և ստոր վիճակի մարդկանց հետ։ Այդ դերձակները, ատաղձագործներն ապրում էին իրանց տնակներում, ունէին մեծ արհեստանոցներ և ստանում էին մշտական արդիւնք։ Նիմշելը չունէր ոչ տուն, ոչ պարապմունք, ոչ արդիւնք. բայց նա գիտնական էր և դրա հետ միասին (գուցէ այս ամենագրելխաւորն է) նա շատ գեղեցիկ էր և հրապուրիչ։

Եւ երեսուն ռուբլի դրամագլուխ ունեցող ամուսիններն սկսեցին իրանց կենակցութիւնը։ Բացի դրանից Ցիպան ունէր նաև իւր օժիտը—երեք շապիկ, երկու փետրալից դօշակ, երկու ձեռք զգեստ և մի բամբակեայ կապայ։

Ուրիշ ոչինչ չունէին նրանք, և սակայն ապրում էին ահա տասներկու տարի։ Այդ ժամանակուայ ընթացքում նրանք ունեցել են ինն երեխայ, որոնցից չորսը մեռել են, իսկ հինգը մնացել. հաւանաբար կը ծնուեն էլի հինգ հոգի, երեքը կմեռնին, երկուսը կմնան, և նրանք այնու ամենայնիւ կապրին... Ձեզ գուցէ տարօրինակ թուայ,

որ մի ընտանիք, ինչպիսի և լինի նա, կարողանում է ապրել երեսուն ռուբլի դրամագլխով։ Ես ինքս էլ զարմանում էի այդ բանի վրայ՝ մինչև որ մօտից ճանաչեցի Ցիպային։

Արտաքուստ նա ամենասովորական հրէուհի է։ Նա քսանութ տարեկան է, բայց քառասուն տարեկանի տեսք ունի։ Կարճահասակ, կռացած, հագած իւր դիմացկուն կապան՝ նա անցնում է ամբոխի միջից մանրիկ, արագ և միևնոյն ժամանակ մի տեսակ անհամարձակ, դաղտագողի աչքերով։

Նա կարծես շարունակ մի ինչ-որ հոգսի մէջ է, որ նրան խլացրել, յիմարացրել է. մի միայն նրա սև աչքերը արագ-արագ և արթուն կերպով խաղում են այս ու այն կողմը, ասես թէ նա մի բան է փնտռում, դիտում և բուռն կերպով ձգտում է մի բանի։ Ժամանակ առ ժամանակ Ցիպայի աչքերում երևում է բարկութեան արտայայտութիւն, որ կատարելապէս սազ է գալիս նրա ցածր ճակատին, որը խիտ յոնքերից սկսեալ մինչև սև կեղծամը ծածկուած է մանրիկ կնճիռների անթիւ ցանցերով։

Բայց դուք, խնդրում եմ, մի ծիծաղէք փոքրիկ, հասարակ հրէուհու վրայ, որ այնպէս տգեղ է և անդուրեկան. նա հասել է շատ

նշանաւոր հետեւանքի, գործնականապէս լուծելով այն հարցը՝ որ ամբողջ աշխարհը խիստ ծանր է համարում լուծելու համար— նա լուծել է կանայի աշխատանքի կարեւորութեան և արդիւնաւորութեան հարցը։ Ցիպան իւր խնդրի լուծումը հասցրել է մինչև իդէալականը. ահա տասներկու տարի է, որ նա իւր աշխատանքով պահպանում է իւր ամուսնուն, հինգ երեխաներին, յենուած մի միայն երեսուն ռուբլի դրամագլխի վրայ։

Այդ փողերով Ցիպան հիմնել է մի փոքրիկ խանութ, բացի սրանից՝ մի այդքանի էլ կարողացել է վարկ ձեռք բերել իւր նախկին տանտիկնոջ մօտ։ Ամեն մի առևտրականի համար ամենից առաջ անհրաժեշտ են գնողներ, և Ցիպան իւր խանութ բանալու առաջին օրից սկսեց փնտռել գնողներ, փնտռում է և մինչև այժմ, ոչ թէ նրա համար, որ չէ կարողացել գտնել, ոչ, այլ գտնելով մի քանիսին՝ նա իսկոյն կորցնում է նրանց և ստիպուած է փնտռել ուրիշներին։ Այս երևոյթը առաջ է գալիս զանազան պատճառներից, որոնց մէջ յետին տեղ չեն խաղում Ցիպայի խորհրդաւոր գործողութիւնները, որ կատարւում են երեկոները, խանութը փակելուց յետոյ։ Այդ ժամանակ կա-

րելի է լսել, թէ ինչպէս նա ինչ-որ բաներ է անում, հեղուկներ է դարտակում մի ամանից միւս ամանը և այլն։

Չնայելով որ Ցիպայի զբաղմունքը ըստ երևոյթին խորհրդաւոր կերպարանք է կրում փոքրիկ լամպի գունատ լուսատուութեան պատճառով՝ այսու ամենայնիւ այդ զբաղմունքին չէ կարելի առանձին դրագիական նշանակութիւն տալ։ Ցիպան չէ պատկանում հրէական աղանդներից ոչ մէկին, որոնք նըպատակ են դրել վնասել քրիստոնեաներին, չունի ոչ մի մերօպիա և կարծեմ նոյն-իսկ երբէք չէ լսել այդպիսի բանի մասին։ Նա գործում է բացառապէս իւր խելքով, առանց որևէ համերաշխութեան իւր ազգի հետ։ Ցիպայի մերոպիաները—յաճախորդները—օժտուած են նուրբ հոտառութեամբ ու ճաշակով և դեռ հաղիւ ծանօթացած նրա ապրանքների հետ՝ նրանք իսկոյն դադարում են գնելուց, (երկար և, աւաղ, կատարելապէս արժանի կռիւներից և հայհոյանքներից յետոյ), այնպէս որ նոր յաճախորդներ գտնելու անհրաժեշտութիւնը Ցիպայի համար երբէք չէ վերջանում։ Նա կաշուց դուրս է գալիս, չէ խորշում ոչ մի միջոցից, սկսեալ արտասուալի աղաչանքներից մինչև

ձեռք համբուրելը, մինչև ամենատեսակ ծառայութիւններ մատուցանելը։ Ժամանակ առ ժամանակ մի աւելորդ կոպէկ աշխատելու համար՝ նա կատարում է բոլորն՝ ինչ կամենաս. նամակներ է տանում, ծառաներ է առաջարկում, օգնում է գնելու և վաճառելու, փող վերցնելու և պարտք տալու։ Խանութում նա նստում է ընդմիջումներով, ժամանակ առ ժամանակ։ Նրան փոխանակում է մայրը, քոյրերից մէկը, որևէ հարևանուհին, իսկ ինքը ամբողջ օրերով վազում է մի սանդուխից միւս սանդուխը, քաշ է տալիս հին շորի մի կոյտ, կանգ է առնում որևէ մէկի դռանը զամբիւղը ձեռին (զամբիւղի մէջ սովորաբար լինում են գինի և զանազան ուտելեղէններ). կռւում է խոհարարուհիների և դռնապանների հետ, որոնք չեն կամենում նրան տուն թողնել, և նրանց խստութիւնը մեղմացնում է մի ղոյգ թուզ կամ մի բուռ ընկոյզ կաշառք տալով. կատաղի կերպով կռիւ է մղում իւր մրցակիցների հետ, կռիւ, որ սովորաբար վերջանում է ոստիկանութեան միջամտութեամբ։ Մի անգամ բանն այնտեղ հասաւ, որ ոստիկանի ձեռում մնաց նրա բամբակեայ կապան զարդարող օձիքի մի կտորը։

Տեսնելով իւր զգեստը փչացած՝ Ցիպան դառն կերպով արտասուեց։ Սակայն նա շատ քիչ անգամ էր թուլասրտութեան անձնատուր լինում։ Սովորաբար նա ոչնչից չէ զանգատւում, և եթէ որևէ մէկը հարցնէ նրան աւելի կամ պակաս կարեկցութեամբ. «Հը՛, Ցիպա, գործերդ վատ են գնում»՝ նա երբէք դրական պատասխան չի տայ, այլ միայն կասէ. «այնպէս է՝ ինչպէս հաճելի է Աստծուն»։ Պատահում է, որ Ցիպայի կեանքի պայմաններին մօտիկ ծանօթ մարդիկ, տեսնելով նրա կնճռոտ դէմքը, ջղաձգաբար ցնցուող շրթունքները՝ ասում են նորան. —«Ի՞նչ է անում ապա ձեր ամուսինը. ինչո՞ւ նա չէ օգնում ձեզ»։ Այն ժամանակ նրա դէմքի վրայից անհետանում է խոնջութեան ամեն մի հետք և դրա փոխարէն երևում է բարկութեան նման մի բան։ «Նա իւր պարապմունքներն ունի, պատասխանում է նա քրթմնջալով. նա չէ կարող ինձ օգնել առևտուրի մէջ»։

—Դուք շատ դժբախտ էք, Ցիպա՛, որ ունիք այդպիսի ամուսին։ Այս խօսքերի վրայ Ցիպան բարձրացնում է գլուխը.

—Եթէ ես ունենայի տասը աղջիկ՝ այն ժամանակ կխնդրէի, որ Տէր Աստուածը

նորանց էլ այնպիսի բախտ տայ՝ որպիսին ինձ է տուել։ Նրա աչքերը վառուում էին, շրթունքների վրայ երևում էր ակամայ ժպիտ և ամբողջ կնճռոտ դէմքը ծածկուում էր վառ կարմրութեամբ։

Այո՛, հրաշք գործած կլինէր նա, ով կարողանար Շիմշելին սովրեցնել օգնել Ցիպային։ Իւր ամուսնութեան առաջին տարիներում, տակաւին անծանօթ իւր ամուսնու գիտնականութեան չափին՝ Ցիպան թողնում էր նրան խանութում, կարգի վրայ հսկելու և ապրանքներ վաճառելու. նա խիստ բարեխղճութեամբ էր կատարում իւր պարտականութիւնները. անշարժ նստում էր հաշուեսեղանի առաջ, մտածելով, թէ ինչպէս պէտք է համաձայնեցել Միշևայի մէջ յայտնուած ռաբբի Համալիէլի և ռաբբի Էլիզերի երկու հակառակ կարծիքները. կամ մտածում էր Պապս ռաբբիի ասացուածի մասին, որ ուղիղ... հարիւր տասը մեկնութիւններ առաջ էր բերած։ Շիմշելը աշխատում էր գտնել հարիւր տասնմէկերորդը և մտածելով այդ մասին՝ առանց ընդհատելու իւր մտածմունքի ընթացքը՝ հսկում էր խանութի կարգի վրայ։ Բայց երբ բանը հասնում էր նրա պարտականութիւնների միւս մասին, վաճառելուն՝

այստեղ գործը դժուարանում էր, որովհետև Շիմշելը ամենևին չէր հասկանում իւր յաճախորդների լեզուն։ Թարգմանի միջոցով նա մի կերպ բաւականութիւն տուեց երկու աղախիններին պահանջներին. բայց երբ Ցիպան տուն վերադառնալով իմացաւ այն եղանակը, որով կատարուել էր այս վաճառքը՝ քիչ մընաց յուսահատութիւնից քար կտրէր. իմացուեց, որ Շիմշելը մէկ ու կէս աւելի է կշռել ապրանքը՝ քան հարկաւոր էր (նա ամենևին ծանօթ չէր կշեռքի կազմութեանը), և բացի դրանից նորան պակաս են տուել քսան գրօշ։ Ցիպան հառաչեց, հառաչեց, իւր կոշտացած ձեռքը քսեց ամուսնու սև մազերին և ծիծաղեց։

—Դէ՛, գնա՛ քո գործին, ես ինքս մենակ եօլա կտանեմ։ Շիմշելը կրկին ձեռնարկեց իւր գործին, այսինքն զբաղուեց իւր գիտնական գրքերով։ Նրա միտքը խաղաղ էր, իսկ սիրտը լի ուրախութեամբ. նա ըստ ամենայնի բախտաւոր էր։ Նրա հպարտութիւնը կատարեալ բաւականութիւն էր ըստանում՝ երբ նրա նեղ, կեղտոտ սենեակը գալիս էին զանազան մարդիկ, երբեմն շատ յայտնի մարդիկ, հարուստներ, մինչև իսկ գիտնականներ, և հարցեր էին տալիս նորան սուրբ գիտութեան զանազան մութ տեղերի

մասին, կամ պարզապէս խնդրում էին պատմել Հագադայի այս կամ այն կտորը։ Շիմշելը բացատրում էր, խորհուրդներ էր տալիս. ինքն այնքան ոգևորւում էր, որ հոգեզմայլութեան էր հասնում և լսողներին ևս ոգևորում էր։

Դա Շիմշելի մխիթարութիւններից մէկն էր։ Նրա միւս և ոչ պակաս մխիթարութիւնը այն հայրական սէրն էր, որ նա տածում էր հինգ առարկաների վերաբերմամբ, յատակ, սուրբ սէր, առանց որևէ տարակուսանքի և յուզմունքի։ Երեխաների ներկայ գրութիւնն ամենևին չէր անհանգստացնում Շիմշելին, իսկ ինչ վերաբերում էր ապագային՝ նա միանգամ ընդ միշտ վճռել էր— Ենովքը, Մէնդելն ու Լէյզերը գիտնականներ կդառնան, Լիբան և Եսթերիկը կամուսնանան գիտնականների հետ։

Սա ոչ թէ ցնորք, այլ հաստատ համոզմունք էր, որ մի կողմից բոլորովին հանգստացնում էր Շիմշելին, իսկ միւս կողմից էլ հնարաւորութիւն էր տալիս նորան՝ գիտնականութիւնն իւր ցեղի մէջ միշտ հաստատուած տեսնել։

Երրորդ և գուցէ ամենաբարձր երջանկութեան աղբիւրը Շիմշելի համար՝ նրա պարապմունքն էր։ Այո՛, նա ամենևին ծոյլ չէր,

ինչպէս կարող էր կարծել Հարևանցի կերպով դիտողը։ Ես յաճախ եմ լինում Ցիպալի խանութում և այդ տեղից նայում եմ Հարևան սենեակի ներսը. յաճախ տեսնում եմ Շիմշելին բոլորովին խորասուզուած աշխատանքի մէջ. տեսնում եմ նրա գունատ ճակատը քրտինքի խոշոր կաթիլներով ծածկուած, տեսնում եմ, թէ ինչպէս վառ կարմրութիւնը պատում է նրա այտերը, իսկ շրթունքները ջղաձգաբար դողդողում են մտքի սաստիկ լարումից։ Խնդրի դժուարութիւնների դէմ մղած կռուի մէջ Շիմշելն աշխատում է հոգու և սրտի բոլոր ոյժով. բայց դրա փոխանակ որպիսի պարգևներ է ստանում նա իւր աշխատանքի համար, որպիսի գիւտեր է անում նա, որպիսի խոր և մութ առեղծուածներ է լուծում։ Եւ նրա մոլութիւնները սովորական մարդու մոլութիւններից չեն, այլ մեծ գիտնականի։

Օրինակ, մի անգամ նորան յաջողուեց գտնել Կեդաշիմի մէջ, Տալմուտի հինգերորդ գրքում, որ ճառում է զոհաբերութիւնների մասին մի կենդանու անուն, որը, որպէս անսուրբ, չէր կարող զոհ բերուել Աստծուն։ Այդ անուան մասին առաջ ոչ ոք ոչինչ չը գիտէր և այժմ էլ ոչ ոք չկարողացաւ ըմբռ-

նել, թէ ինչ տեսակ կենդանի է նշանակում այդ, բայց և այնպէս այդ գիւտը Շիմշելի սիրտը լցրեց այնպիսի հրճուանքով, որ ծանօթ է միայն գիւտեր անող մեծ մարդկանց, և հռչակուեց ամբողջ թաղում։ Եւ ուրիշ ինչ կերպ կարող էր լինել։ Մի՞թէ այս քիչ է, իմանալ՝ որ այս ինչ կենդանին—յայտնի չէ, թէ իսկապէս ո՞րը—որ կրում է որոշ անուն՝ օրէնքով չէր կարող զոհ բերուել Աստծուն այն սրբավայրում, որ շինուած է երկու հազար տարի առաջ։

Մի ուրիշ անգամ Շիմշելը տեսաւ մի խիստ անսովոր բան։ Դա պատահեց գիշերը։ Ցիպան քնած էր, երեխաները նոյնպէս։ Բայց նա քնած չէր և նստած՝ գիրքն առաջին, լամպի մօտ աշխատում էր։ Նա երկար աշխատում էր, քունն սկսում էր նրան յաղթել, երբ յանկարծ աչքերը գրքի վրայից բարձրացնելով սարսռեց, սարսափելի գունատուեց, լայն բացեց աչքերը և հէնց այդ դրութեան մէջ էլ մնաց։ Ահա թէ ինչ տեսաւ նա։

Դրսում խաւար, անթափանցիկ գիշեր էր։ Խաւարի սև ֆոնի վրայ Շիմշելի յոգնած աչքերին երևաց երկար, ոսկեփայլ թել, որն սկսեց քիչ-քիչ լայնանալ, բաժանուել աւելի

փոքրիկ թելերի, և վերջ ի վերջոյ կազմեց մի ոսկեայ սանդուխ, որի կատարը հասնում էր թանձր ամպերով պատած երկնքին, իսկ հիմքը յենուում էր նեղ բակի խոնաւ քարերին։ Զորս կողմում ամեն ինչ խաւար էր, և այս մթութեան մէջ ոսկեայ սանդուխը աւելի որոշ էր երևում իւր աստիճաններով, որոնցից իւրաքանչիւրի վրայ նստած էր մի-մի հրեշտակ։ Հրեշտակներն իրար նման չէին։ Շիմշելը կարգով ճանաչում էր նրանց. նա նրանց երբէք չէր տեսել, բայց նրանց պատկերները շատ անգամ էին նորան պատահում իւր կարդացած գրքերի երեսներում։ Սանդուխի հիմքում, իւր հզօր թևերի ամբողջ ոյժով պահելով սանդուխը՝ կանգնած էր Սարա—խա—Օլեամը, գիտութեան հրեշտակապետը։ «Ի զուր չէ, որ Հագատի մէջ նա աշխարհի իշխանի տիտղոսն է կրում», մտածեց Շիմշելը, որովհետև հրեշտակի ամբողջ հսկայական պատկերը ծածկուած էր ծիրանիով, իսկ գլուխը զարդարուած թագով. այդ թագը կազմուած էր իրար հետ վարպետութեամբ հիւսուած տառերից. նրանք վառուում էին այն հրեղէն լեզուների պէս, որոնք բարձրանում են դէպի երկինք նահատակների խարոյկներից. նա սառը դէմքով հպարտ ոգի

էր և նրան շրջապատել էր արծաթափայլ մառախուղը։ Շիմշելն իսկոյն հասկացաւ, որ այդ մառախուղը հրեշտակից ծագող մրաքերն են։ Մառախուղը թանձրանում էր, արծաթափայլ թելերը կազմելով, և տարածւում էր շրջապատող խաւարի մէջ, կարծես կրռւում էր նրա հետ, իսկ Սաբ—խա—Օլեամը նայում էր այդ կռուին մեծ, խաղաղ, պարզ աչքերով, և նրա թագի բոցավառ տառերը հիւսուելով կազմում էին մի բառ - «յաղթութիւն»։

Աւելի վեր կանգնած էին ուրիշ մեծ ու փոքր հրեշտակներ։ Շիմշելը նրանց ամեն մինի անունը տալիս էր։ «Ա.հա Մետատրոն հրեշտակը, մտածում էր նա։ Օրհնեա՛լ լինիս, Մետատրոն հրեշտակ, դու, որ պատկանում ես Իսրայէլին՝ որպէս աչքի բիբը, և քո թեւերը հովանու նման տարածում ես նրա թշուառ գլխին»։

Մետատրոն հրեշտակի թեւերը ձիւնից աւելի սպիտակ էին, և որպէս տալէսներ (վերարկուներ), որոնց մէջ աղօթում են Իսրայէլի զաւակները՝ եզերուած էին սև շերտերով։ Յաւիտենական Աստուածը այս սգոյ զգեստը հագցրեց Մետատրոնին հէնց այն վայրկենին, երբ նրա պահպանած ժողովուրդը կորցրեց իւր հայրենիքը։

«Իսկ սա Ուրիէլ հրեշտակն է իւր տասնեամեակ ընկերներով։ Նրանք կառավարում են տարուայ տասներկու ամիսները։ Սրանք մրրկի և կրակի հրեշտակներ են, նման են ծիրանեգոյն շամանդաղի, միայն գոյները բոպէ առ բոպէ խառնանում են. նրանք հալւում, անհետանում են, և այնտեղից, ուր կանգնած էին՝ լսւում է մի ձայն, որ յիշեցնում է կարուած լարի տխուր ձայնը։ «Ա.հա... օրհնեա՛լ լինիս, ով Սանդալֆոն, աղօթքի հրեշտակ»։

Այդ վայելչահասակ, լուսաւոր, ոսկեփայլ մազերով պսակուած աղօթքի հրեշտակը կանգնած է այն սանդուխի կատարին, որն իւր հզօր ուսերի վրայ բարձրացրել է գիտութեան հրեշտակապետը, նշանագրերից կազմած թագը գլխին և ծիրանին հագին։ Աղօթքի հրեշտակը այնպէս հեզութեամբ խոնարհեցրել է իւր գլուխը դէպի գետին, որ կարծես ուշադիր կերպով ականջ է դնում իրան հասնող ձայներին։ Շիմշելը Սանդալֆոնին աւելի համարձակ է նայում, քան թէ միւս հրեշտակներին։ Սանդալֆոնի շրթունքների վրայ խաղում է հեզ ժպիտ։ Նրա ձեռները լի են ծաղիկներով։ Նրանք փոփոխւում են ամեն բոպէ. այժմ մի տե-

սակ են, մի բոպէից յետոյ ուրիշ տեսակ են լինում, և նա ծաղիկներից շարունակ հիւսում է ահագին պսակներ։

«Օ՜, ես գիտեմ, մտածում է Շիմշելը. սրանք մարդկային աղօթքներ են, որ շարունակ լողում են, լողում են, լողում են աշխարհի վրայից դէպի Եհովան, իսկ Սանդալֆոնը բռնում է նրանց թռչելու ժամանակ, գարձնում է ծաղիկներ, պսակներ է հիւսում և դնում Յաւիտենականի աթոռի պատուանդանի մօտ։ Յաւիտենական Աստուածն ինքն է արդէն իմանում, թէ ումն են այդ աղօթքները և ինչ են խնդրում նրանք»։

Մարդկային աղօթքներն հաւաքող Սանդալֆոնը, երևի, խորապէս յուզուած է և տխուր, որովհետև նրա աչքերում պէծ-պէծ են տալիս և վառւում ահագին ադամանդների նման խոշոր արտասուքներ։ Շիմշելը նայում է այդ արտասունքերին և մտածում. «օրհնեալ լինիս, Սանդալֆոն հրեշտակ, նրա համար, որ դու այդպէս ներողամիտ ես դէպի մարդիկ»։ Նա սկսում է դիտել այդ ծաղիկները, որոնք Սանդալֆոնի ձեռներից դուրս են սահում իբրև երկար, երփներանգ ժապաւէն, նայում է, և չէ կարողանում կշտանալ նրանց գեղեցկութեամբ։ Պայծառ, կար-

միր զանգակները նրա աչքին այնպիսի մեծութեան են հասնում, որ նա չէ կարողանում դիտել այդ ծաղիկները լուսամուտի բացուածքից. ձիւնի պէս սպիտակ վարդերը փայլում են ինչպէս արծաթափայլ արտասուք. մեխակները իրանց թերթիկներից թափում են ոսկեայ կայծերի անձրև։ Շիմշելը նայում է բոլոր այս հրաշքներին, նրա շըրթունքների վրայ երևում է հրճուանքի ժըպիտ և ձեռներն ակամայ բարձրանում են դէպի երկինք։

Յանկարծ ոսկեայ սանդուխը, նրա վրայ կանգնած հրեշտակները և Սանդալֆոնի դըրախտային ծաղիկներն սկսում են գունատուել և միախառնուելով կազմում են խաւար մառախուղ, որ տեղ-տեղ ներկուած է ոսկու և ծիրանու գոյնով, և վերջապէս բոլորովին անհետանում են։ Շիմշելը ծանր ձեռքով տըրորում է աչքերը և անգիտակցաբար նայում է իւր շուրջը։

Նրա առաջ սեղանի վրայ դրուած հանգչելու մօտ լամպի նեղ ապակուց դուրս էգալիս կապտաւուն, ածխահոտ լոյսը. սրա շուրջը մահճակալի և արկղների վրայ քնած է նրա բոլորը ընտանիքը. դեղին կատուն առանձին ձևով բարձր մռմռում է Եհովի մօտ. դըր-

սում լուսանում է, բայց թանձր ամպերը առաջուայ պէս պատել են երկինքը, և սնձրևի խոշոր կաթիլները անդադար թափւում են նեղ բակի քարերի վրայ. քամին առաջուայ պէս ճչում, չարանում է։

Շիմշելը վեր կացաւ, հագաւ տալէսը (վերարկու) և ձեռները երկինք բարձրացնելով՝ սկսեց գոհանալ Աստծուց, որ նա հնարաւորութիւն տուեց իրան, որպէս երկրորդ Յակովը, տեսնել նրա հեշտակներին, որ նա թափեց իւր վրայ այսպիսի անչափ, անսահման երջանկութիւն։

Շիմշելն աւելի ևս բախտաւոր էր նրանով, որ ոչ մի հոգս, ոչ մի անհանգստութիւն, որ կապուած է մարդասիրութեան, հասարակական բարօրութեան և սրանց նման այլ պարտքերի վերացական հասկացողութիւնների հետ՝ չէր վրդովում նրա կեանքը։ Ոչինչ այդպիսի բան Շիմշելը չգիտէր. մինչև իսկ չգիտէր, թէ արդեօք հասկացողութիւններ աշխարհում գոյութիւն ունեն, թէ ոչ։ Բացի գիտութիւնից, որի մէջ ամբողջովին խորասուզուած էր. բացի երեխաներից, որոնց սիրում էր, և կնոջից, դէպի որը վերաբերւում էր հովանաւորողի զգացումով՝ նա բացարձակապէս ոչ մի բանով չէր զբաււում։

Նա ամենաչնչին կապ անգամ չունէր այն հասարակութեան հետ, որ շրջապատում էր նրա մի բուռն հայրենակիցներին. չէր ճանաչում նրան և չէր էլ կամենում ճանաչել։ Ատելութիւն չէր տածում նա դէպի այդ հասարակութիւնը, և ատելութիւնը նորան ծանօթ էլ չէր։ Իսկ այն մարդկանց, որոնց հետ նա կապուած էր ծագումով, կրօնով և լեզուով՝ նա սիրում էր, և այդ սէրը նորան ոչ մի անախորժութիւն չէր պատճառում։ Նա սիրով էր բաց անում նրանց առաջ իւր գիտութեան գանձարանը։ Վերջապէս նա չէր խառնւում ոչ մի գործի և գլուխ չէր ճաքացնում իւր հայրենակիցների հասարակական կազմութեան լաւ և վատ կողմերի վրայ։ Եթէ որևէ ժամանակ նա լսում էր այսպիսի տրտունջ. «վիճակներս վատ է», նա պատասխանում էր. «այդպէս է հաճելի Աստծուն». եթէ այս տրտունջն ընդունում էր հարցական եղանակ, թէ «ինչ կլինի մեր վերջը՝» Շիմշելը հանգստացնում էր. «կլինի այնպէս՝ ինչպէս Աստուած կկամենայ». այս դէպքում յիշեցնում էր Մեսիայի գալստեան մարգարէութիւնը, որը, նրա կարծիքով, անպատճառ պէտք է իրականանար, և ժպտում էր կէս-խորհրդաւոր և կէս-ուրախ ձևով։

Միայն մի բան նրան մինչև հոգու խորքը վշտացնում էր,—դա հրէաների Բաբելական գերութիւնն էր։ Մտածելով կամ կարդալով այդ մասին՝ նա տխրում էր, ընկնում մտախոհութեան մէջ և կիսաձայն երգում էր Բաբելական գետերի և աքսորանքի երկրի մասին։ Ճիշտ այդպէս էլ վշտացնում էր նրան նաև Երուսաղէմի սրբութեան կործանումը։ Այս անցքի պատճառ եղող մարդուն, Հռոմայեցոց Տիտոս կայսրին, նա ատում էր ամբողջ սրտով, բուռն կատաղի կերպով, և սա միակ ատելութիւնն էր, որ կար նրա մէջ։ Սակայն ատելութիւնից աւելի յաճախ նա անձնատուր էր լինում վշտի։ Երբեմն կարդալով հռոմէական զօրքի կողմից Երուսաղէմի պաշարման և դրանից յետոյ տեղի ունեցած դէպքերի պատմութիւնը՝ նա երկու ձեռքով բռնում էր գլուխը, հառաչում և արտասուում։

Բայց այդ սև տարիների դառնութեան փոխարէն նա հարիւրապատիկ վարձատրւում էր՝ երբ ի նկատի էր ունենում միւս տարիների մեծութիւնը։ Այսպէս օրինակ, Շիմշելը անսահման հրճուանք էր զգում Սողոմոն թագաւորի փառքն ու հարստութիւնը տեսնելով։ Ի՞նչպէս բարձրաձայն երգում և պա-

ռում էր նա՝ ուխտի տապանակի առաջ երգող և պարող Դաւիթ թագաւորի հետ. Ի՞նչպէս յաղթանակով ցնծում էր Մակաբայեցոց հետ։ Ի՞նչպէս ուրախացնում էր նրան առաջին պարտութիւնից յետոյ հրէից օրէնսդիր ծերակոյտի, սենեդրիօնի, առաջին ժողովը. ի՞նչպիսի ջերմ մասնակցութիւն էր ընդունում նրա վիճաբանութիւնների մէջ և ի՞նչպէս հպարտանում էր այդ մասնակցութեամբ։ Ամբողջ ժամերով նստում էր նա Գամաղիէլ բաբբիի ոտների մօտ. սրամիտ և կենդանի վէճեր էր անում Եղուդա բաբբիի հետ և սիրով ու յարգանքով տուչորւում էր դէպի Ակիբայ բաբբին։

Եւ այսպէս հազուագիւտ վշտերի և մշտական ուրախութիւնների մէջ սահեց անխոնջ Ցիպայի գիտնական ամուսնու կեանքը՝ մինչև մի գիպուած, որ անսպասելի կերպով տակն ու վրայ արաւ և յաւիտեան խլեց նրա հանգիստը։

Եթէ ձեզանից մէկը եղել է Օնգրատում՝ նա կճանաչէ այն նեղ փողոցը, որ այսպէս կոչուած բուլ'վարից գնում է դէպի հրէից

քաղաքամասի անծանօթ, թէև բազմաթիւ փողոցները։

Ես շատ ամաչում եմ, որ ստիպուած եմ տանել ձեզ դէպի մի նեղ փողոց... բայց ճար չկայ...

Վ.իպասանը նոյն է՝ ինչ որ ճանապարհորդը։ Քիչ ծանօթ, կամ բոլորովին անծանօթ վայրերն ամենից աւելի են գրաւում նրա ուշադրութիւնը։ Եթէ ձեզանից մէկն ու մէկը սիրում է ճանապարհորդել՝ նա թող գայ իմ յետևից դէպի այն նեղ փողոցը, որ երկու կողմից սկսւում է քարեայ խուլ պարիսպներով. յետոյ այդ պարիսպները վերջանում են, և տեսնում էք միայն վատ սպիտակացրած, ցածրիկ, փայտեայ տնակներ երեք, երկու և նոյն-իսկ մի լուսամուտով։

Ա.հա այն տունը, ուր ապրում է Զիմշել բաբին իւր ընտանիքով։ Այս տնակը փողոցի կողմից երկու լուսամուտ և մի դուռ ունի, կամ աւելի ճիշտ ասած՝ դռնակ, երկու աստիճաններով։ Լուսամուտները Զիմշելի բնակարանինը չեն. նրանք լուսաւորում են կլէկչի Իցկայի բնակարանը. իսկ դռնակը տանում է իսկապէս դէպի Ցիպայի խանութը։

Ես ամաչում եմ, որ մենք ստիպուած ենք անցնել այս խանութի առաջից. այդ

տեղից մոմերի, եղի, տառեխի մի այնպիսի հոտ է փչում... Բոլոր այդ նիւթերը բնական են և այն աստիճան սովորական, որ անկարելի է խուսափել նրանցից՝ երբ ճանապարհորդում ես իրականութեան աշխարհում։ Խանութի ներսը նոյնպէս բնական է և սովորական, բայց մենք կարիք չունինք նրա ներսը նայել։ Ա.հա բակի դռնակը։ Ներս մտնենք այս դռակից և այցելենք Զիմշելի կացարանը։ Օրը վերջանալու վրայ է. բայց արևի վերջին ճառագայթներով այնու ամենայնիւ մենք կարող ենք տեսնել բակի ներսում, տան վրայ, օդի մէջ կախուած հսկայական մեծութեամբ մի ձեռանկար. ինչ բան է այս։ Արդեօք որևէ վհուկի կախարդութիւն, դիւթական մեքենայութիւն։ Խաւար հրէաների այս կեղտոտ բակում ամեն բան սպասելի է։

Բայց մի՛ վախեաք և յետ մի փախչիք։ Օդի մէջ կախուած ձեռանկարը ոչինչ երևակայական բան չէ պարունակում. սա պարզապէս մի որևէ ձեռնոցագործի նշանակ է, որ կախել են չորացնելու համար։

Տնակում, դռների դէմուդէմ, բնակում է Մովշան, նշանակների նկարիչը, Զիմշելի երեխաների և մանաւանդ Սոթերիկի և Մէն-

գելի իսկական բարերարը։ Նա նրանց շարունակ անակնկալ ուրախութիւններ է պատճառում։ Երբեմն նրանք տեսնում են նրա տան առաջ վիթխարի մեծութեամբ մի ձեռք, երբեմն բոլորովին կարմիր կօշիկ, գեղին նըրբանով, երբեմն կապոյտ ֆոնի վրայ լայն փըռած վարդագոյն զգեստ, երբեմն կառքեր և շարաբաններ։ Այս հրաշալի նկարների առաջ Եսթերիկը կանգնում է ամբողջ ժամերով, իսկ Մէնդելը մինչև այն աստիճան յափշտակուում է, որ նստում է քարի վրայ և լուռ հրճուանքով այնպէս է բարձրացնում գըլուխը, որ թասակն ընկնում է նրա գանգրահեր գլխից, իսկ ինքը այդ չէ նկատում։ Լուսամուտից այդ նկատում է բարեպաշտ Ենովքը. նա դուրս է գալիս սենեակից, ամենամեծ պատկառանքով վերցնում է թասակը, որպէս զի ծածկէ թեթևամիտ եղբօր գլուխը. բայց յանկարծ նկարը տեսնելով նըկարչի տան առաջ՝ չէ կատարում իւր մտադրութիւնը, կանգ է առնում, թասակը բռնած պահելով Մէնդելի գլխի վրայ։ Այսպէս նայում են մանուկները մինչև այն ժամանակ՝ երբ Լիբան կանչում է նրանց ճաշի կամ ընթրիքի։

Լիբան ժամանակ չունէր զուարճանալու

նկարներով. բայց երբ նա գալիս էր հրաշալի մանուկներին հանելու հիացմունքի իդէալական աշխարհից՝ այն ժամանակ ինքն էլ ընկնում էր նոյնպիսի դրութեան մէջ, նոյնպէս կանգ էր առնում և նայում։

Սակայն ներկայ րոպէին մեծ գեղին ձեռքը մնացել է առանց հանդիսատեսի։ Նա կախուած է մթութեան մէջ աննկատելի մի լարի վրայ, կախուած է և ուժգին քամու ժամանակ ճօճւում է երկարաձիգ ճռռոցով, իսկ նրա լայն փռած մատներն ասես թէ կամենում են ծածկել երկու փոքրիկ լուսամուտները։

Մովշայի պատուհաններն այսօր պայծառ լուսաւորուած են. սենեակի խորքից լսւում են բազմաթիւ խօսողների ձայներ։ Դուցէ Մովշան և նրա կին Խացան բազմամարդ խնջոյք են սարքել. կասկածում եմ, որովհետև չնայելով Բօդշիլ'դների և միւս բանկիրների հարստութեանը՝ նշանակների նկարիչը, կարելի է ասել, բոլորովին հարուստ չէ։ Ի՞նչ է ուրեմն կատարւում Մովշայի տանը։ Ես նորան մօտիկ ծանօթ չեմ և չեմ կարող երաշխաւորել՝ ինչպէս կերաշխաւորէի Շիմշելի համար։ Մենք շուտով ամեն բան կիմանանք կարգով, իսկ այժմ մի ակնարկ ձգենք միւս

լուսամուտի վրայ, որ ուղիղ Մովշայի տան դէմուդէմն է։

Մենք կանգնած ենք մի տան մօտ, որի պատը հին է, ցածր, փլչելու աշկարայ տրամադրութիւն է ցոյց տալիս և կռացել է դէպի գետին, իւր խորտուբորտ, կճպած մակերևոյթով։ Նրա հետ միասին դէպի գետին է կռացել կիսափուտ շրջանակով լուսամուտը, որ բացուած է այդ պատի վրայ։ Լուսամուտի յետևում պլպլում է զունատ լոյս։ Փոքրիկ լամպն է վառուում մի սեղանի վրայ, որը դրուած է լուսամուտի մօտ։ Սեղանի կէսը բռնել է մի մեծ բացուած գիրք, իսկ առաջը նստած է...

Այժմ ես պատիւ ունիմ ներկայացնել ձեզ Շիմշելին, որի մասին դուք այնքան լսեցիք ինձանից։ Ես համոզուած եմ, որ և դուք, նրան դիտելով՝ կհամաձայնէք Ցիպայի կարծիքի հետ, թէ նա շատ գեղեցիկ և չքնաղ է։ Նա բարձրահասակ է և շատ նիհար. Նրա ձեռները բարձր շրջանի տիկնոջ ձեռների նման խիստ սպիտակ են, նեղ և բարեձև, թէև վտիտ։ Նրա զունատ դէմքը, երկար, սև գանգրահեր միրուքով, աչքի է ընկնում անսովոր մաքրութեամբ և դիմագծերի վայելչութեամբ, միացած խաղաղ և պարզ

արտայայտութեան հետ։ Երբ նա գրքի վերայից բարձրացնում է իւր աչքերը՝ նրա դէմքը վառուում է խորհրդաւոր և խորին մտախոհութեան լուսով. դուք շուտով կտեսնէք, որ այս սև, խոր աչքերը, ժամանակ առ ժամանակ արտասուում են բաբելական գերութեան և Երուսաղէմի աւերածի վրայ, յաճախ նայում են այն բոցավառ հիէրոգլիֆներին, որոնք պսակում են գիտութեան հրեշտակների հպարտ գլուխը, նայում են աղօթքի հրեշտակի ադամանդանման արտասունքներին։ Սար—խա—Օլեամի խաղաղ հըպարտութիւնից և Սանդալֆոնի գերմարդկային հեզութիւնից մի ինչ-որ բան անդրադարձել և յաւիտեան մնացել է Շիմշելի բորբոքուած և միևնոյն ժամանակ մեղմ աչքերում։ Եթէ նրա բարակ, բուստանման շրթունքների տերը հասարակ հրեայ չլիներ՝ դուցէ դուք այդ շրթունքները համարէիք նեարդային, տպաւորուող բնաւորութիւն ունեցող գեղարուեստագէտի սեփականութիւն, այն աստիճան գեղեցիկ է նրանց գծագրութիւնը, այնպիսի պերճախօս, մեղմ ժպիտ են ձևացնում նրանք երբեմն։ Եթէ Շիմշելը ձեզ էլ նոյնպէս հետաքրքրում է, ինչպէս ինձ՝ դուք կարող էք նրան դիտել, ինչքան կա-

մենաք, միայն եկէք միշտ նոյն ժամանակ և նոյն բակը։ Ամենայն երեկոյ նա նստում է նոյն դիրքով, ինչպէս մենք նրան տեսանք այժմ, դէմքը դարձրած դէպի լուսամուտը, գրքի վրայ կռացած և կամ մի ինչ-որ բարձրը, բարձր տեղ նայելիս։ Երբեմն դուք նրան կտեսնէք Եսթերիկի հետ, որ ցատկում է նրա ծնկների վրայ, կամ Լէյզերի հետ, որ բարձրանալով նրա ուսերը՝ երկու ձեռներն անց է կացնում նրա սև մազերի մէջ

Այդ ժամանակ Շիմշելը խիստ ուրախ է, մոռանում է բաբելական գերութիւնը, մոռանում է Սանդալֆոնին, նայելով մանուկներին ժպտում է և բարձրաձայն համբուրում է նրանց։

Այժմ մենք նրան երկար չենք դիտի. նշանակների նկարչի դռները բացւում են. այնտեղից դուրս է թափւում սև կերպարանքների մի ամբողջ խումբ և մտնում է Շիմշելի սենեակը։ Մենք էլ մտնենք նրանց յետևից։ Սենեակի ներսը ձեզ ծանօթ է իմ նկարագրութիւնից։

Այժմ այդ սենեակը բերանէ բերան լցուած է։ Այնտեղ են — կլայեկչի Իգկոն, նշանակների նկարիչ Մովշան, մորթեգործ Ովսեը, մորթեգործ Ովսելի որդին Մէյերը. մնացած երկուսին ես չեմ ճանաչում։

Երևի այս մարդկանց համար էր Մովշան լուսաւորել իւր սենեակը։ Բայց ինչ են ուզում նրանք Շիմշելից։ Նրանք մեծ յարգանքով գլուխ են տալիս նորան. այս հասարակ արհեստաւորները զգում են գիտնականի գերազանցութիւնն իրանցից։ Շիմշելը ողջունում է նրանց սիրալիր կերպով, քաղցրութեամբ, իւր դիրքին պատշաճ արժանապատուութեամբ։ Եկողների միջից առաջ է անցնում աւագագոյնը և ամենից պերճախօսը— մորթեգործ Ովսելը։ Մի քիչ անվստահ ձայնով նա դիմում է գործին և հաղորդում է, որ հաւաքուած բոլոր հասարակութիւնը վճռել է...

Վճռել է... Բայց ի՞նչ կարող է վճռել հրէաների հասարակութիւնը։ Իհարկէ, ոչընչացնել քրիստոնեաներին, ինչպէս համոզում է մեզ մի իմաստուն բրօշիւր—«Աշխարհի նուաճումը հրէաների ձեռքով»։ Նրանք կամենում են և ջանք են անում տիրել աշխարհին (Ինչ քաջամարտիկ ազգ). հաւանօրէն այժմ վճռել են իրանց դիտաւորութիւնը իրագործելու համար մի որևէ ձեռնարկութիւն անել։

Մորթեգործ Ովսելը հաղորդում է, թէ ինքը և իւր ընկերները վճռել են առաջիկայ

Պուրինի տոնին մի ներկայացում տալ։ Ա.ր-դիւնքը կյատկացնուի աղքատներին։

Վ.ճռելով աղքատների օգտին մի ներ-կայացում տալ՝ նրանք խնդրում են ռաբբի Շիմշելին միանալ իրանց հասարակութեան հետ։ Ռաբբի Շիմշելը լաւ ձայն ունի, շատ լաւ ձայն։ Ոչ ոք նրանից լաւ չէ կարող եր-գել գլխաւոր դերը։ Ինքը կանտորը *) այս-պէս է խորհուրդ տուել նորանց, իսկ յայտնի է, որ կանտորը շատ լաւ է երգում և ծա-նօթ է թաղի բոլոր ձայներին։ Ռաբբի Շիմ-շելը գիտուն, շատ գիտուն մարդ է։ Ոչ ոք չէ կարող այնքան մեծ համակրութիւն զար-թեցնել դէպի նրանց գործը՝ ինչպէս նա. ոչ ոք այդ գործին այնպիսի նշանակութիւն տալ չէ կարող հասարակական կարծիքի ա-ռաջ։ Ինքը ռաբբի Բօրուխը, որ յայտնի է իւր բարեգործութեամբ՝ խնդրում է նրա-նից այդ բանը։

Ի՞նչ պէտք է խաղան նրանք։ Նրանք խաղալու են «Հզօր Սամսոն» կոչուած պիէ-սան, որ հաւանաբար, ռաբբի Շիմշելին արդէն ծանօթ է. (Ի՞նչ չգիտէ ռաբբի Շիմշելի իմաս-

*) Կանտոր—հրէից սինագոգայում երաժշտապետ։

տութիւնը). նրա մէջ այնքան շատ են գե-ղեցիկ նուագները, այնքան շատ, որ...

Մորթեգործ Ովսելը վերջացնում է իւր ճառը, և առաջ է անցնում բարձրաձայակ, թիկնաւէտ Մովշան, նշանակների նկարիչը։ Մովշան անհամարձակ ժպիտով արդարացի նկատողութիւն է անում, թէ ռաբբի Շիմշելը նաև այն պատճառով պարտական է ընդու-նել նրանց խնդիրը, որ Հզօր Սամսոնի դերը ամենից աւելի պատշաճ է Հզօր Սամսոնին։ Նա Սամսոն էր կոչւում, սա էլ է Սամսոն կոչւում. իսկ եթէ նա ուժեղ էր մարմնով՝ սա էլ ուժեղ է խելքով։ Մովշայի նկատո-ղութիւնն այնպէս սիրալիր, այնպէս սրամիտ և դրա հետ միասին այնպէս հիմնաւոր է՝ որ ընդհանուր քաջալերութեան է արժանա-նում։ Յիրաւի Շիմշելը՝ Սամսոն է, ինչպէս Մովշան՝ Մովսէս, Ովսելը՝ Ովսէաս, Իցիկը՝ Իսահակ, և այլն։ Դուք, ի հարկէ, չէիք էլ կարծում, որ այդպիսի մեծ ու ամենից յարգ-ուած անունները ծածկուած են այսպիսի հասարակ, այսպիսի ծիծաղելի անունների տակ։ Դուք ի հարկէ, շատ անգամ էիք ծի-ծաղել Մովշայի, Իցկայի և Շիմշելի վրայ, չիմանալով, որ գործ ունէք Մովսէսի, Իսա-հակի և Սամսոնի հետ...

Շիմշելը կամ Սամսոնը երկար մտածում էր իրան եղած առաջարկութեան վրայ։ Այն, ինչ որ նրանից պահանջում էին՝ սրդէն խորհրդածութիւն չէր, այլ գործ. սա մի այնպիսի բան էր, որ Շիմշելին մինչև այժմ երբեք չէր պատահել։

Գործը նրան վախեցնում էր.—այնպէս ծանր կլինի քայլել, շարժուել, լարել ոյժերը, մի խօսքով գործել։ Եւ բացի դրանից՝ ներկայացումը, որպէս ունայն գործ, արդեօք չի՞ ստորացնի նրա յարգը, չի՞ փոքրացնի նրա նշանակութիւնը։

Նա երկար մտածում էր, ապա վեր կացաւ և ասաց.

—Եթէ կանտօրն ասում է, որ ես այդպէս լաւ ձայն ունիմ. եթէ ռաբբի Բօրուխը խնդրում է ինձանից այդ. եթէ արդիւնքը յոգուտ աղքատների է՝ ես համաձայն եմ։

Բոլորն ուրախանում են, ինքը Շիմշելն էլ է ուրախանում։

Եթէ Շիմշելը հրէայ չլինէր՝ նա կասէր, և գուցէ կատարեալ իրաւունք ունենար ասելու. «Ես ինքս էլ աղքատ եմ». բայց նա հրէայ է. նրա կինը երեսուն ռուբլի դրամագլուխով առևտուր է անում, ամենայն օր պատրաստում է գետնախնձորով ապուր, իսկ

ուրբաթ և շաբաթ օրերը գնում է մէկ ու կէս ֆունտ միս կամ ձուկ, որ, ինքներդ էլ կհամաձայնէք, բոլորովին բաւական է եօթը հոգու համար։

Կեանքի համար բոլոր անհրաժեշտ բաներն ունենալով՝ Շիմշելը չէր էլ մտածում այն մասին, թէ արդիւնքի կէսը կարող էր իւր օգտին յատկացնել։

Շիմշելի հիւրերն սկսեցին պատմել, թէ ով ինչ կլինի։

—Բարձրահասակ ու թիկնաւէտ Մովշան ճիշտ նման է փղշտացոց կայսրին, և նա էլ այդ դերը կերդէ։

—Կլայեկչի Իցկան կլինի մինիստը և Մովշայի մերձաւորը, իսկ մնացած երկուսը կներկայացնեն Երուսաղէմի ծերերին, որոնք արտասուում են փղշտացոց կայսրի առաջ...

—Ովսելի որդի Մէյերը (այստեղ Մէյերը կարմրում է ամօթից) կլինի Դալիլա... նա այնպէս ջահել ու այնպէս սիրուն է, որ գեղեցիկ տիկին կդառնայ...

—Միւս փղշտացիները առ այժմ այստեղ չեն. նրանք չկարողացան գալ, ժամանակ չունէին։

Մեզ կսովորացնէ ինքը կանտօրը. մենք նրա մօտ կերթանք երգերի կրկնութեան

համար, իսկ շորերի և միւս ծախսերի համար բաբբի Բօրուխը խոստացել է փող հաւաքել... Հարուստ վաճառականները կտան... Դէ մենք էլ մի բան կանենք... Ինչ արած, եթէ Աստուած մեզ միջոցներ է տուել՝ պէտք է օգնենք նորանց՝ որոնք ոչինչ չունին։

—Մորթեգործ Ովսելը չի խաղայ. նա միայն կարգադրութիւններ կանէ. պէտք է հսկէ, որ բոլոր գործն ընթանայ կարգ ու կանոնով։

Բացատրելով բոլոր մանրամասնութիւնները՝ հիւրերը գլուխ տալով և շնորհակալութիւն յայտնելով ցրուեցան։ Շիմշելը մի բոպէ անգամ չէր ենթադրում, որ այսօրուայ տուած խօսքը նրա համար կարևոր հետևանքներ է ունենալու, և ով գիտէ գուցէ և նրա զաւակների համար։

Բայց այսքանը հաստատ էր, որ այդ օրուանից Ցիպայի համար սկսուեց կեանքի մի նոր դարագլուխ։ Ո՞րքան զուարճութիւն էր ստանում նա, Ինչպէս սաստիկ խփում էր նրա սիրտը հպարտութիւնից և ուրախութիւնից։

Շիմշելը մինչև մի աստիճան փոխեց իւր կեանքի շրջանակը. առաւօտները յաճախ թողնում էր տունը և գնում էր կանտորի

մօտ։ Նա առաջ էլ երգեցողութեան մէջ տրգէտ չէր, բայց այժմ վճռեց լուրջ կերպով պարապել։ Իսկ գիշերները սիրող դերասանների խումբն իւր ամբողջ կազմութեամբ հաւաքւում էր նրա տանը։

Բարձր դիրքի տէր մարդկանց յատուկ սիրալիր հպարտութեամբ՝ նա խնդրեց իւր ժամանակաւոր ընկերներին պատիւ անել նորան իրանց այցելութեամբ, և նրանք ուրախութեամբ համաձայնեցին։ Շատ հաճելի է ամեն օր հիւր գնալ այնպիսի մարդու մօտ, որ մեզանից այնչափ բարձր է կանգնած։ Կըլայեկչին, մորթեգործը, նշանակների նկարիչը հրճւում էին, որ կարող են ամեն օր յաճախել գիտուն մարդու տունը. բայց որովհետև իրանք կոպիտ, ստոր աշխատանքով էին պարապում, որ խլում էր ութ. տասն երբեմն նոյն-իսկ օրուայ տասներկու ժամը՝ այդ պատճառով միայն երեկոյեան շատ ուշ նրանք կարողանում էին գալ։ Երբ նրանք գալիս էին՝ սենեակի օդը տաքանում էր, սաստիկ տաք վառարանի օդի նման։ Նրանց շունչը քիչ էր մնում կտրուի. այդ ժամանակ Շիմշելը փրկարար օրինակ էր ցոյց տալիս. նա հանում էր վրայից իւր խալաթը և նստում սեղանի վրայ լուսամուտի մօտ։

Քիչ յետոյ հիւրերն էլ հանում էին իրանց վերնազգեստները, ասելով. «ներեցէք խնդրեմ», և նոյնպէս նստոտում էին, ո՞վ ուր պատահում էր,—արկղի, կոտրած աթոռների և կամ ուղղակի յատակի վրայ։ Այս վերջին դիրքը ամենից աւելի յաճախ վիճակւում էր տասնվեցամեայ Մէյերին, ապագայ Դալիլային (իւր զուարճութեան համար նա նոյն-իսկ իրաւունք չէր համարում հանել իւր բաճկոնը)։

Այսպիսի պատկեր էր կազմւում. Շիմշելը նստած սեղանի վրայ՝ բռնում էր գլխաւոր տեղը. մնացած խմբից ամենից աւելի տչքի էր ընկնում փղշտացոց կայսրը, ուրիշ խօսքով՝ նկարիչը, որի ձեռները նախշած էին զանազան նկարներով ելակի գոյնի ներկով, և Դալիլա—Մէյերի կլոր դէմքը, շոգից և յուզմունքից կարմրած ու քրտինքի խոշոր կաթիլներով ծածկուած։ Քիչ յետոյ սկսւում էր իսկական կրկնութիւնը, այսինքն խմբական և առանձնակի երգեցողութիւնը։ Այս գործը ղեկավարում էր մորթեգործը, որ խորքում կանգնած՝ ձեռներով չափ էր տալիս. այս դէպքում Մէյերը յաճախ գլխին հարուած էր ստանում. (Մէյերը միշտ տատանւում էր և չէր կարողանում հերթին հասնել։)

Ահա այս ժամանակ Ցիպայի համար հասնում էին երջանկութեան բոպէները։ Որպէս տանտիկին՝ նա ամենևին չէր մտածում հիւրերին վայելուչ կերպով ընդունելու մասին։ Ի հարկէ, սա համարւում է անքաղաքավարութեան նշան, բայց ի՞նչ արած։ Ձայնական—դրամատիական երեկոներին Շիմշելի և Ցիպայի մօտ ոչ մի հիւրասիրութիւն չէր լինում։ Եթէ հիւրերից մէկն ու մէկը երկար երգեցողութիւնից յոգնում էր՝ այնպիսին խմում էր մի բաժակ ջուր (մաքուր ջուր, առանց գինու և շաքարի) և ուրիշ՝ ոչինչ։

Ցիպան տնտեսութեան հոգսերով զբաղուելու կարիք չունէր, ուստի նստում էր յատակի վրայ, ձեռներով ծնկները բռնած, նայում էր և լռում։ Նայում էր ամուսնուն և լսում էր ամուսնուն։ Երբ երգում էին միւսները՝ նրա դէմքն անտարբեր, երբեմն նոյն-իսկ արհամարհական էր դառնում. բայց երբ գալիս էր վայելչահասակ մարդու հերթը, որ նստած էր սեղանի վրայ, առանց վերնազգեստի՝ այն ժամանակ, օ, այն ժամանակ նրա դեղնած, թառամած դէմքը վառւում էր այնպիսի հպարտութեամբ, ընդունում էր այնպիսի անկեղծ հրճուանքի արտայայտութիւն, ով որ նայէր նորան՝ կասէր. «բախտաւոր կին»։

Այո՛, անկասկած էր, որ իւր համար անմոռանալի այդ երեկոներին Ցիպան բախտաւոր էր, հպարտ և ուրախ։ Նա մոռանում էր իւր խանութը, իւր պարտատէրներին և այն շեմքերը, որոնց մօտ այնքան կանգնում էին նրա հիւանդ ոտները. մոռանում էր այն սանդուխները, որոնց վրայ նա շնչակտուր էր լինում. մոռանում էր և խստասիրտ խոհարարուհիներին և հասարակաց կարգի պահապաններին. մոռանում էր իւր բոլոր նեղութիւնները և մի միայն մտածում էր. «ա՜խ, ի՞նչ գեղեցիկ է նա, ի՞նչպէս լաւ երգում է նա, ո՞րքան յարգում են նրան մարդիկ»։ Երբեմն նա աւելացնում էր. «ի՞նչպէս ողորմած է Աստուած դէպի ինձ, որ ուղարկել է ինձ այսպիսի երջանկութիւն»։

Կրկնութիւնները տևում էին երբեմն մինչև գիշերուայ ժամը մէկը, երկուսը, բայց Ցիպան մի րոպէ անգամ չէր գոցում աչքերը։ Աշխատում էր չքնել նոյնպէս և Ենովքը, նստած իւր անկիւնում, դեղին կատուն ծունկների վրայ. բայց նրա աչքերը իրանք իրանց փակւում էին և գլուխը չէր կամենում ուղիղ մնալ։ Ինչ վերաբերում է միւս երեխաներին՝ Լիբան պառկում էր մօր բարձր դոշակների վրայ, աչքերը չռած և մազերը ցրուած, իսկ Եսթերիկը և Մէնդելը քնում էին՝ ուր պատահում էր։ Լէյզերը ժամանակ առ ժամանակ զարթնում էր, իւր սուր ձայնը միացնում էր միւս երգիչների ձայնին, ուշադրութիւն չդարձնելով նրանց վրայ։

Պուրիմ, Պուրիմ. չգիտեմ, արդէն քանի՞ հազար տարի սրանից առաջ Արտաշէս թագաւորի նախարար՝ անսիրտ Համանը մտածել է ոչնչացնել ամբողջ իսրայելական ազգը, բայց Մուրթքէն իւր իմաստութեամբ և Եսթեր թագուհին իւր գեղեցկութեամբ փրկել են նրան։ Համանը կախաղան է բարձրացել, և իսրայելական ազգը փրկուել է կորստից։ Եւ ահա այս ժողովուրդը մինչև այսօր տօնում է իւր փրկութեան տարեդարձը այնպիսի ուրախութեամբ, որ կարծէք թէ սա երկհազարամեայ տարեդարձ չէ, այլ առաջին կամ երկրորդն է։ Ի յիշատակ Համանի գլխատման թխում են առանձին կարկանդակ, որ Համանդաղ է կոչւում։

Պուրիմ, Պուրիմ։ Օնգրօտի բոլոր հրէաները լցուած են ուրախութեամբ և անսովոր

ցնծութեամբ։ Ծերերից սկսած մինչև մանուկները, հարուստներից մինչև աղքատները բոլորը ուրախանում են (միայն Ռոդշիլ'դներն ու մնացած բանկիրներն այլևս չեն ուրախանում։) Այդ օրը կենդանի, երկար խօսակցութիւններ են տեղի ունենում՝ չքնաղ և բարի—ó, ո՛րչափ բարի—թագուհի Եսթերի մասին. ամեն տեղ օրհնում են և իմաստուն Մուրթքէի անունը։ Բախտաւոր մարդիկ են այդ Եսթերն ու Մուրթքէն։ Նրանց աճիւնները փտել են երկրի խորքում մինչև ամենայետին հիւլէն, իսկ նրանց յիշատակը մինչև այժմ օրհնում են միլիոնաւոր սրտեր։

Շիմշելն ևս ուրախանում է ուրիշների հետ և ամբողջ օրը օրհնում է Եսթերին և Մուրթքէին հանդիսաւոր երկիւղի զգացմունքով. նա վախենում է ոչ թէ այն հասարակութիւնից, որի առաջ պատրաստւում է դուրս գալ, այլ յանձն առած գործի մեծութիւնից և լրջութիւնից։

Եթէ Սամսոնի պէս մեծ մարդուն հրապարակաւ ներկայացնելիս նա թէկուզ որևէ բանով արատաւորելու լինի նրա յիշատակը՝ նրա խղճի վրայ մեծ մեղք կծանրանայ։ Ո՛չ, նա պէտք է զեղեցիկ, մեծ, հզօր լինի՝ ինչպէս որ եղել է Սամսոն։ Մինչև-իսկ նա զգում է,

թէ ինչպէս իւր կրծքում եռում են մինչև այժմ անյայտ մնայուն զգացմունքներ, թէ ինչպէս իշխանութեան ծարաւը, անբացատրելի տխրութիւնը և անորոշ ուրախութիւնը սաստիկ բաբախեցնում են նրա սիրտը։ Շիմշելին թւում է, թէ նա աւելի է բարձրանում։ Ամբողջ օրը նա Ցիպայի հետ ոչինչ չէ խօսում.— կկամենար խօսել, բայց չէ կարողանում։

Իսկ Ցիպան արտասւում է։

Ախ ի՞նչպէս լաց չլինի, երբ նա չէ կարող թատրոն գնալ և տեսնել իւր ամուսնու առաջին խաղը։ Մի ծանօթ տիկին, որին պէտք է նրա ծառայութիւնը՝ հրաւիրել է նրան ամբողջ երեկոյի համար, վերջապէս և խանութը չէ կարելի անտէր թողնել։ Լաց է լինում Ցիպան, յետ ու առաջ վազվզելով, սանդուխների վրայով այս ու այն բակը մտնելով և կամ ուժասպառ ընկնելով աթոռի վրայ խանութի հաշուեսեղանի յետև։

Լաց է լինում նոյնպէս և Լիբան՝ իւր բարդ տնտեսական պարտքերը կատարելիս։

Նա նոյնպէս թատրոն չի գնայ, որովհետև նրա հագի զգեստը, նրա միակ զգեստը պատառ-պատառ ցնցոտի է դարձել։ Ատնամանները նոյնպէս մաշուած են։ Եւ Լիբան չէ կարող մարդամէջ դուրս գալ։ Բայց բա-

բեպաշտ Ենովքը բոլորովին անտարբեր է դէպի առաջիկայ հանդէսը և մինչև-իսկ կամաւ տանն է մնում, որովհետև կրօնական ուղղափառութեան տեսակէտից նա մի քանի կասկածներ ունի։

Իսկ Եսթերիկն ու Մէնդելն առաւօտից զարդարւում են թատրոն գնալու համար և միայն սպասում են այն րոպէին՝ երբ հարևան երեխաները ճանապարհ կընկեն, որպէսզի հետևին նորանց։ Լիքան դեռ լուսաբացից առաջ իւր փոքրիկ քրոջ ՝հագցրել է կապոյտ ատլասէ ոտնամաններ (սպիտակ թելերով կարկտած) և սպիտակ ժապաւէնները, որքան հնար է՝ թագցրել է վարդագոյն զգեստի տակ։ Օրը մօտենում էր վախճանին. բայց ոչ հայրն էր տնից դուրս գնացել և ոչ էլ Մովշայի երեխաներն էին պատրաստւում գընալ։ Միայն երեկոյեան աղջամուղջին, երկար ու ջերմեռանդ աղօթքից յետոյ, Շիմշելը ոտքը դուրս դրեց իւր դռան շեմքից, խոր մըտածմունքի մէջ ընկղմուած։ Նրա յետևից իրար ձեռքից բռնած՝ քայլ առ քայլ գնում են Եսթերն և Մէնդելը։ Նոյն րոպէին բակի խորքում գտնուող տնակի դռներն աղմուկով բացւում են, և այնտեղից դուրս են թափւում մի ամբողջ խումբ տղաներ և աղջիկներ, — Մովշայի ու Իցկայի երեխաները։

Եսթերիկն ու Մէնդելն հանդիսաւոր աղաղակ են բարձրացնում։ Նրանք թողնում են իրանց հօրը (և շատ վատ են անում) և միանում են փոքրիկ հարևանների խմբին։ Բայց փոքրիկ հարևաններն այնու ամենայնիւ մեծ են նրանցից, ունին աւելի երկար ոտներ և կարող են մեծ քայլեր անել։ Նրանք անսահման ուրախ են. հագել են իրանց տօնական շորերը, վազում են բարձրաձայն ծիծաղելով, իրար բռնելով և ամենևին ուշք չեն դարձնում երկու փոքրիկ արարածների վրայ, որոնք հետևում են նորանց բոլոր ոյժով, երեսները կարմրած և մազերը խճճուած։ Նրանք չեն տեսնում, չեն նկատում, որ Եսթերիկի կապտագոյն ոտնամանները խրւում են ձիւնի մէջ, իսկ Մէնդելի ՝թասակն ամեն րոպէ ընկնում է գետին։ Համարեա ամեն րոպէ նրանք ստիպուած կանգ են առնում, և ահա այն ողորմելի ժապաւէնները կրկին դուրս թռան Մէնդելի զգեստի տակից, էլ աւելի դժուարացնելով նրա քայլուածքը։ Ուրախ և աղմկալի խումբը շարունակում է հեռանալ, աւելի և աւելի մեծ անջրպետ թողնելով. ահա նա հասաւ փողոցի ծայրին... ահա արագութեամբ շարժւում է լայն, ձիւնապատ ծառուղիով։

Եսթերիկն ու Մէնդելը լարում են իրանց վերջին ոյժերը և հասնում են փողոցի ծայրին։ Բայց ո՞ւր են նրանք, որ պէտք է ճանապարհ ցոյց տային. ճեմելիքում չեն. երևի թեքուեցին որևէ կողմնակի փողոց և բալորովին կորան աչքից։ Ի՞նչ անեն. երկուսով երթան, այդ լաւ կլինէր, եթէ որ...

Երկու փոքրիկները կրկին բռնում են իրար ձեռքից. նրանք կանգնած են երկու փողոցի հանդիպած տեղում։ Նրանց առաջ ձգւում է ծառուղիի անչափելի, անվերջ տարածութիւնը։

Նրանք մինչև այժմ այստեղ չէին եղել. ի՞նչպէս գնան այժմ այս անծանօթ երկրով։

Եւ վերջապէս, եթէ նրանք անցնեն այս ընդարձակ հարթութիւնը, այնուհետև ո՞ւր գնան։ Հարթութեան ամեն կողմից այնպիսի երկար, այնպէս սարսափելի կիրճեր են բացւում. արդեօք սրանցից իսկապէս ո՞րն է տանում դէպի նրանց ճանապարհորդութեան նպատակը։ Ի՞նչ պէտք է անել։

Շատ պարզ է. երկար խորհրդածութիւններից յետոյ Եսթերիկը սեղմում է իւր փոքրիկ բռունցքները, դնում է աչքերի վրայ, որոնցից հոսում են արտասուքի ամբողջ առուակներ։ Մէնդելն հետևում է նրա օրի-

նակին, միայն այն տարբերութեամբ, որ ըսկսում է ողբաձայն և սուր կերպով աղաղակել «տատըլէ»։ Եսթերիկը, որպէս աւելի մեծ՝ շատ լաւ իմանում է, որ Հայրը նրանց ձայնը լսել չէ կարող. նա ինչ-որ հեռու, հեռու տեղում է գտնուում. իսկ մայրը մօտ է։ Նա ուղղում է եղբօր ասածը և գոչում է «մամըլէ». Նրանք յետ են դառնում և գնում դէպի տուն։ Միևնոյն բոպէին Շիմշելը, անտեղեակ այն թշուառութեան, որ հասել է նրա սիրելիներին՝ ներս է մտնում թատրոնական հանդերձասենեակը։

Հանդերձասենեակը լիքն է բազմութեամբ, աղմկալի պայծառ և շատ պայծառ լուսաւորուած։ Մովշան իւր վառ կարմիր զարդարանքներով խտտղացնում է մարդու աչքերը։ Թիկնաւէտ, ուժեղ, ամուր կազմուածքով և ֆիզիքական աշխատանքից զարգացած ջղերով Մովշան աւելի պակաս ազդեցութիւն է գործում քան Շիմշելը։ Դրա հետ միասին, որպէս փղշտացոց կայսր՝ նա քիչ պարտականութիւններ ունի։ Մովշան զգում է իրան հիանալի վիճակի և հոգեկան ամենալաւ տրամադրութեան մէջ։

Ինչպէս վայել է մեծ պետութեան թագաւորին՝ նա հագել է ալ-կամիր անդրավար-

տիք, նոյնպէս բլուզ, զօտեւորուած ոսկեթել ժապաւէնով։ Նրա գլուխը զարդարում է ոսկեայ թագը՝ ալ-կարմիր փունջերով, իսկ գոտուց կախուած է իսկական սուր, որ աղերսելով և արտասուելով ստացել է նա ստորին կարգի մի զինուորականից։ Մովշան ոտքից գլուխ այնպէս կարմիր է, որ գործի էութեան անծանօթ մարդ կկարծէր, թէ նա պատրաստւում է միջնադարեան դահճի դեր խաղալ։ Իրօք՝ սա իսկական արքայական ըզգեստ է, և նոյնքան արքայական է երևում Մովշայի ամբողջ դէմքը, որ զարդարուած է մի փառաւոր կարտօնէ քթով, ահագին բեխերով և իծանման միրուքով à la Նապոլէօն։ Ահա արդէն մի քանի ժամ է, որ նա անցուդարձ է անում հանդերձանոցում, զիկայնում է սուրը և եռանդուն կարգադրութիւններ է անում իւր զօրքի հոմազգեստի մասին։ Փոքր բանակ չէ դա. կազմուած է չորս զինուորից և մի առաջնորդից։ Առաջնորդը, որ նաև թագաւորի մերձաւորն և առաջինն է՝ կլայեկչի Իցկան է. սա հագել է դեղին կապայ, արծաթեայ թիթեղներով զարդարուած։ Բնութիւնից նա թուխ է. բայց որովհետև Շիմշելն էլ, փղշտացոց կայսրն էլ նոյնպէս թուխ են՝ ուստի Իցկան դրել է բոցակար-

մրագոյն կեղծամ և վրան էլ կանաչագոյն թեթև գլխարկ։ Զինուորներն այնքան էլ ճոխ չեն հագնուած, բայց և այնքան լաւ, որ պատիւ են բերում իրանց տիրոջ։ Բոլոր այս ասպետները, ինչպէս առհասարակ վայել է ասպետներին՝ շատ վաղ են պատրաստուած պատերազմի դաշտ դուրս գալու։ Միմիայն Դալիլան, որպէս տիկին, դեռ պատրաստ չէ։

Այստեղ հանդերձասենեակի անկիւնում, ուր համախմբուած են այնքան մարդիկ, Մէյերը, մորթեգործ Ովսելի որդին, քիչ է մնում ամօթից և զսպուած ուրախութիւնից քար կտրի, երբ ահագին ուռած շրջազգեստի վրայից նորան հագցնում են կապտագոյն շոր, իսկ թանձր ալիքներով ուսերի վրայ թափուող կեղծամի մէջ հագցնում են երկու ահագին կարմիր վարդ։ Մէյերի ուռած, գրեթէ մանկական դէմքը նոյնպէս կարմիր է՝ որպէս այդ վարդերը. մեծ ձեռները տարակուսանքով մտնում են յարդագոյն ձեռնոցների մէջ և վերցնում են վարդագոյն կտորից շինուած հովհարը։ Յարդագոյն ձեռնոցներով, հովհարը ձեռքին՝ Մէյերը, մէջքը պատին տուած՝ կանգնում է ուղիղ և անշարժ, իսկ նրան զարդարող անձինք (իհարկէ արական սեռի) փղշտացոց կայսրի առաջնորդութեամբ դի-

տում են նրան ոտքից մինչև գլուխ և միաձայն կրկնում են «գեղեցիկ տիկին»։

Այդ րոպէին ներս է մտնում Շիմշելը։ Հանդերձասենեակում տիրում է լռութիւն, որպէս նշան կատարեալ յարգանքի։ Շիմշելը չէ խանգարում այդ լռութիւնը ոչ մի խօսքով. մօտենում է սեղանին, որի վրայ փռուած է նրա թատրոնական զգեստը. սկսում է հագնել դէմքի մի այնպիսի հանդիսաւոր արտայայտութեամբ՝ ինչպէս սովորաբար հագնում են տալէսը աղօթքից առաջ։

Վաղուց արդէն հասել է ժամանակը, որ դերասանները վերջացնեն իրանց զարդարանքը։ Թատրոնական դահլիճում հաւաքուած հանդիսականներն սկսում են անհամբերութիւն ցոյց տալ։

Թէ դա ի՞նչպիսի դահլիճ է, ո՞րտեղ է գըտնուում և ի՞նչ ձևով է այս երեկոյ ընկել սիրողների տրամադրութեան տակը՝ այդ երկար կլիներ պատմել։ Աշխատանք, զարդարանք և ամեն տեսակ անախորժութիւններ այդ դահլիճի համար քիչ չեն եղել։ Վերջիվերջոյ դահլիճը ճարուեց։ Փողոցից դէպի այնտեղ տանում է մի տհաճին այր, ուրիշ խօսքով՝ նախասենեակը. այս նախասենեակում, ճարպի մոմի լոյսի առաջ, բարձրանում էր բուֆէտը, որտեղ

առատ էին մածուցիկ և ոչ այնքան գրաւիչ կոնֆէտներ, կիսով չափ փտած խնձորներ և ն։

Մարդկանց խմբերն անցնելով այս այրից՝ կարողանում են վերջապէս հասնել շատ նեղ և անչափ երկար դահլիճին, որի յատակի վերայ, հանդիսականների յարմարութեան համար, շարուած են փայտի կոճղեր։ Այդ փայտերն ունէին կիսաշրջան մակերևոյթ և առանձին դիւրութիւն չէին ներկայացնում նրանց վրայ կանգնողների համար։ Բծախնդիր մարդը կարող էր մի բան ասել նաև լուսաւորութեան մասին. որովհետև պատուաւոր հանդիսականների համար բեմի առաջի նստարանները լուսաւորուած էին, մինչդեռ բոլոր մնացածը խորասուզուած էր խաւարի մէջ, այնքան խոր խաւար՝ որքան ամենասարսափելի յուսահատութիւնը։

Նուագածուների խումբը բացակայ էր. նրա փոխանակ առաջում դրուած էր մի բազկաթոռ, որի վրայ բազմել էր մորթեգործ Ովսելը։ Նա նստել էր երեսը ոչ թէ դէպի բեմը, այլ դէպի հասարակութիւնը, որովհետև պէտք է ղեկավարէր ոչ թէ նուագածուների խումբը, այլ հասարակութիւնը։ Դերասաններն առանց այն էլ լաւ գիտեն իրանց դերերը և հարկ եղած դէպքում կարող են

դիմել եռանդոտ և փորձառու Մովշայի (փրզշտացոց կայսրի) օգնութեանը։

Բայց հասարակութիւնը անհանգիստ և անհնազանդ տարը է։ Նրա ցոյցերը կարգի տակ դնելու համար ըէժիսսոր Ովսելը նստել է այնտեղ՝ ուր սովորաբար գտնւում է երաժշտապետը։

Հէնց հիմայ էլ փայտի կոճղերի վրայ կանգնած մարդիկ սկսում են աղմուկ բարձրացնել աշկարայ անհամբերութեամբ... Էլի մի ըոպէ՝ և կբարձրանայ սարսափելի խառնակութիւն։ Բայց Ովսելի լայն թիկունքի յետևից բարձրանում է վարագոյրը... աղմուկը դադարում է, ասես դիւթական գաւազանի շարժումով, և մեռելային լռութեան մէջ հնչում է առիւծի երկարաձիգ և ահաւոր մռնչիւնը...

Բեմը ներկայացնում է անապատ։

Խորքում աղօտ կերպով ծրագրւում են մի քանի արմաւենիներ։ Երևի դա օվազիս է։ Օվազիսից դուրս է գալիս մի ահագին մեծութեան և ընկուզագոյն առիւծ, վառ պսպղուն աչքերով։

Զուր չէր, որ անապատի թագաւորը այնպիսի սարսափելի մռնչիւն արձակեց. նրա հոտառութիւնը սուր է. շատ հաւանական է, որ նա զգաց մարդու մօտենալը։

Ահա և մարդը։ Նա նոյնպէս դուրս է գալիս արմաւենիների յետևից, միայն ուրիշ կողմից. դուք երևի հասկանում էք, որ սա Սամսոնն է։

Մի՞թէ սա Շիմշելն է։

Ո՜րպիսի այլակերպութիւն։ Եթէ Ցիպան այստեղ լինէր՝ նա էլ չէր ճանաչի իւր ամուսնուն։ Նա թւում է աւելի բարձր, աւելի քաջ. իւր ցուցմունքներով պատրաստուած զգեստը զուրկ չէր փայլից և արժանաւորութիւնից։

Այս զգեստը ոսկեթելերով բանուած մի կարմիր շապիկ է, սպիտակ վերարկու, որի վրայից թափուած են նրա սև երկար մազերի ալիքները։ Սամսոնի կուրծքը ծածկուած է ադամանդեայ մանեակով. գլխին ունի ոսկեայ սաղաւարտ, ադամանդեայ գարգմանակով։

Ես չեմ կարող ձեզանից թաքցնել, որ ոսկու դերը խաղում է այստեղ արոյրը, իսկ ադամանդները ուլունքներ են. բայց Սամսոնի արտաքինը ոչինչ կեղծ բան չունի. նրա արժանաւորութիւնն ու քաջութիւնը պարզ են՝ որպէս յստակ ջուր։ Դերասանն այնպէս է մտել իւր դերի մէջ, որ բոլորովին միացել է իւր ներկայացրած անձի հետ։

Համարձակ և վստահ իւր ոյժերի վրայ՝

Նա մոտենում է անապատի թագաւորին և սրա կրակոտ հայեացքին պատասխանում է խաղաղ, մի փոքր հեգնական նայուածքով։ Առիւծն այս համարձակութեան վրայ զարմացա ծ՝ բարձրանում կանգնում է յետին թաթերի վրայ (կուլիսների յետևում թագնուած Մովչան քաշում է այն թելը, որ փաթաթուած է անապատի թագաւորի առաջին թաթերին) և մռնչիւն է արձակում. (Ինչ զօրեղ թոքեր են ունենում երբեմն նշանակների նկարիչները)։ Հասարակութիւնը սարսափում է, բայց Սամսոնին ոչ մի բան չէ վախեցնում։

Մի ոստիւնով նա անցնում է բեմից, և ապշած հանդիսականների աղաղակը դեռ չը լռած՝ նա առիւծին պատառում է երկու հաւասար մասերի։

—Բրավո, բրավո, բրավո, գոչում են նստարաններից բարձր շրջանները. իսկ խաւարից, ուր խորասուզուած են ստորինները՝ լսւում են ուրախութեան և յաղթանակի ձայներ...

Մորթեգործ Ովսելը վեր է կենում տեղից, պատացնում է երկու ձեռները և գոռում.

—Stille! (լռութիւն)։

Խաւարը լռում է. իսկ Սամսոնը բեմի առաջամասում կանգնած՝ ցոյց է տալիս հան-

դիսականներին մեղրի խորիսխը, որ գտնուել է պատռած առիւծի բերանում, այն թշուառ առիւծի, որի երկու մասերը ընկած են իրարից քիչ հեռու, և որի աչքերը առաջուայ պէս շարունակում են փայլել։

Սամսոնի դէմքի վրայ երևում էր նրա կրած զգացմունքների պատկերը։

Առիւծին երկու մաս անելը։ Շիմշելը առաջ իւր մէջ չէր զգում այսպիսի ոյժ։ Երևում է, թէ ինչպէս նրա սիրտը լցուում է ուրախութեամբ, որ վերջապէս զեղուում է գոհութեան և յաղթանակի երգով։

Նրա ձայնը հրաշալի է, արձակ և բաւական մշակուած տենոր։ Զնայելով ձայնական անբարեյաջող պայմաններին՝ նրա ձայնի հընչիւնները լցնում են ամբողջ ցած դահլիճը ծայրից ծայր, լողում են այնպէս յստակ, որ մինչև իսկ բարձր շրջանները լսում են անկեղծ բաւականութեամբ, իսկ ստորինները այնպիսի հոգեզմայլութեան մէջ են ընկնում, որ ընժիսսոր Ովսելը երկար ժամանակ եռանդով աշխատում է կարգը վերականգնելու համար։

Երկրորդ պատկերը ներկայացնում է մի արտ։

Հանդիսականների աչքի առաջ կան առնուազն յիսուն հասկ, իրարից բաւական հեռու կանգնած։

Հասկերի առաջ կանգնած է Սամսոն և երգում է։ Նրա երգից մենք իմանում ենք, որ արտը փղշտացու է և որ նա պատրաստում է ոչնչացնել։ Եւ յիրաւի, դէպի փղշտացիները ատելութեամբ լցուած իւր երգը հազիւ է վերջացրել՝ որ հասկերի մէջ սկսեցին երևալ դեղին աղուէսները։ (Այժմ ոչ միայն Մովշան, այլ և նրա մերձաւոր Իցկան ստիպուած էին քաշել խորհրդաւոր թելերը)։ Աղուէսների յետևից փայլեցին կապոյտ ծիրանեգոյն կրակները, որոնք վերջապէս մարեցան, բոլոր դահլիճը լցնելով թանձր ծխով և ծծումբի սաստիկ հոտով։ Բարձր շրջանները հազում են և կնճռում դէմքերը, իսկ խաւարի մէջ կատարեալ ուրախութիւն է տիրում, այս անգամ առանց ըէժիսսոր Ովսելի որևէ միջամտութեան։ (Ովսելը նոյնպէս դրել էր քթին կարմիր թաշկինակը և սաստիկ հազում էր)։ Հազը մի կողմից, բուսականութեան բուրն ցոյցերը միւս կողմից, տևում են մինչև այն ժամանակ՝ երբ կրկին բարձրանում է վարագոյրը։

Արմաւենիների տակ, բեմի խորքում նստել են երեք ծեր հրէաներ և ողբում են իրանց հայրենիքի թշուառութիւնն ու փղշտացոց գազանութիւնները։ Ծերունիները

հագել են երկար շորեր։ Նրանց սպիտակ մազերը թափուում են մորթեայ գլխարկների տակից, որոնք կիսով չափ ծածկում են տաբիներից և ձախորդութիւններից կնճռած ճակատները, իսկ ձեռներում երկար փայտեր ունին։

Նրանց ձայները դողդողում են և շատ լաւ ցոյց են տալիս նրանց սրտերը լցնող յոյզն ու կսկիծը։

Նրանց երգի բառերից մենք իմանում ենք, որ փղշտացոց թագաւորը իսրայելացոց ազգի հետ խաղաղութեան դաշն կապելու միակ պայման դրել է՝ «Հզօր Սամսոնին» յանձնել։ Ծերունիները վճռում են խնդրել Սամսոնին, որ նա կամաւ զոհէ իւր անձը հայրենիքի փրկութեան համար և անձնատուր լինի թշնամուն։ Նրանք կամենում են գնալ նրա մօտ... բայց ահա նա ինքը։

Բեմը իսկապէս ողբերգական դրութիւն է ներկայացնում։ Անձնատուր լինել թշնամուն... ծաղր ու ծանակի, անարգանքի և սոսկալի մահուան համար։ Այն ժամանակից, երբ Շիմշելը Սամսոն դարձաւ՝ ծանօթացաւ փառքի և յաղթութիւնների հետ, այժմ էլ նա խորին վիշտ և զայրոյթ է զգում։ Միւս կողմից պարտականութեան գիտակցութիւնը և հայրենիքի սէրը իրանց բանն անում են։

Նայեցէք, ինչպէս փոխւում է նրա դէմքը, ուրպիոի մահուան գունատութիւն է պատում նրա ճակատն ու այտերը, նրա աչքերը ինչպէս մերթ վառւում են ատելութեան կրակով և մերթ լցւում են ցաւակցութեան արտասուքներով։ Բրավո, բրավո։

Մենք այժմ արդէն տեսնում ենք ոչ թէ հասարակ դերասան, այլ իսկական գեղարուեստագէտ, որը մինչև իւր էութեան ամենանուրբ թելերը զգում է, որ ինքը տղամարդ է, հզօր ոյժերով և հրաբղխային հոգով։ Նա երկար ժամանակ տանջւում է ներքին կռուով. յետոյ յանկարծ մեկնում է զոյգ ձեռները դէպի հրէից ծերերը, և նրա կրծքից դուրս է թռչում մի բարձր աղաղակ։

—Կապեցէք։

Այս աղաղակի մէջ լսւում է հոգեկան բոլոր ցաւն ու բարձր անձնազոհութիւնը։ Հրէից ծերերը, կապելով հերոսի ձեռներն ու ոտները՝ արտասւում են։ Առաջին կարգի հանդիսականների աչքերում նոյնպէս երևում է արտասունք. խաւարից լսւում են հառաչանքներ և հեծկլտանքներ։ Բէժիսսոր Ովսելը ոչնչի վրայ ուշադրութիւն չէ դարձնում, որովհետև ծածկել է իւր դէմքը կարմիր թաշկինակով և նոյնպէս արտասւում է։

Այս ժամանակ լսւում է աղմուկ, զէնքի շաչիւն, ձիերի տրոփիւն... փղշտացոց կայսրը երևում է իւր շքախմբով, և կապուած Սամսոնին տեսնելով՝ չափազանց գոռոզ դիրք է ընդունում։

Գերին կանգնած է անշարժ, արժանապատուութեամբ լի։ Նա լուռ է և խաղաղ աչքերով նայում է թշնամու դէմքին։

Բայց փառաւոր քթով, à la Նապոլէօն զարդարուած միրուքով այդ դէմքը նայում է չարութեամբ և հեգնութեամբ։ Բոլոր ասպետական սովորութիւնների հակառակ՝ փղշտացոց թագաւորն ու նրա շքախումբը թոյլ են տալիս իրանց անզէն թշնամու գլխին թափել զանազան վիրաւորանքներ և անվայել կատակներ։

Սամսոնը համբերում է, բայց ոչ երկար։ Պարզ է, թէ ինչ փոթորիկ է եռում նրա ներսում, ինչպէս յուսահատութիւնը փոքր առ փոքր տեղի է տալիս զայրոյթի, ինչպէս նրա մկանունքները լցւում են արիւնով։

Յանկարծ նա ոտքից ցգլուխ ցնցւում է. նրան կապկապող պարանները ցրիւ են գալիս ինչպէս սարդի ոստայն։ Եւ մինչև որ փղշտացիք կարողացան ուշքի գալ՝ նա կռանում է, վերցնում է նա իւր ոտքերի տակ

ընկած իշի ծնօտը։ Ձեռքի մի լայն շարժում, մի ակնթարթ — և փղշտացոց զօրքը գետին է թաւալւում, իսկ Նրանց թագաւորն ամօթալի փախուստով փրկութիւն է որոնում։

Այն ժամանակ, յաղթական հրճուանքով, իւր և իւր հայրենիքի փրկութեան ուրախ գիտակցութեամբ լցուած՝ նա այնպէս գեղեցկանում է, ինչպէս նրան երբէք չէր տեսել նոյն-իսկ Ցիպան, որ գովաբանում էր նրա գեղեցկութիւնը։ Իւր զարհուրելի զէնքը բռնած ձեռքում, ժպիտը շրթունքներին, սպիտակ, մինչև գետին հասնող վերարկուն վրան՝ նա լիքը կրծքով Երգում է յաղթանակի և ուրախութեան օրհներգութիւն։ Գովում է Եհովային, որ օգնեց իրան յաղթել այս զօրաւոր հազարներին։ Մթթէ, յիրաւի, յաղթական Սամսոնի ոտների տակ պառկած են յաղթուած հազարներ։ Մթթէ նրա զէնքը իսկապէս իշի ծնօտ էր, և ոչ թէ եղան ոլոգի ոսկր։

Այդ միևնոյն է. բաւական է, որ Շիմշելը այդ ժամանակ գեղեցիկ է, հզօր և բախտաւոր և որ, երբ վարագոյրն իջաւ՝ Ովսելն սկսեց բոլոր ոյժով աղաղակել.

«Still, maaa! maaa!» իսկ յետոյ զգալով իւր բոլոր անզօրութիւնը՝ ներս մտաւ խա-

ւարի մէջ և շուտ դուրս եկաւ այն տեղից մի երեխայի հետ, որին թևնոցից բռնած քաշ էր տալիս դէպի նախասենեակի դռները, ուր և երեխան անյայտացաւ։ Խեղճ երեխայ, նա իւր կեանքում երբէք այդքան դիակներ չէր տեսել մի անգամից։ Մեռած փղշտացիք չափազանց զարմացրին նրան, և երբ մանաւանդ Նրանցից մէկը, (կարծեմ կայսրի մերձաւորը) Սամսոնի երկար երգի ժամանակ սկսեց շարժուել, որ աւելի յարմար պառկի՝ երեխան գոռաց և միւսները հետևեցին նրա օրինակին։

Կազմուեց մի խմբերգ, որ օպերայի հեղինակն ամենևին չէր նախատեսել, և միայն Ովսելը սահման դրեց դահլիճի այս անվայել ընթացքին, հեռացնելով անկարգութեան ըսկզբնապատճառին։

Հազիւ ըէժիսսօրը վերադարձաւ իւր տեղը՝ երբ վարագոյրը կրկին բարձրացաւ։ Այժմ մենք մի բոլորովին անսովոր բան ենք տեսնում։

Բեմի կենտրոնում կանգնած է — մի կարծէք խնդրեմ, որ դա սօդայի ջուր վաճառելու տնակ է — կանգնած է հրաշագեղ և գրաւիչ փղշտացուհու՝ Դալիլայի պալատը։ Պալատի բաց դռները զարդարուած են քաթանէ վարագոյրներով, որոնց եզրերը բանուած են

ծաղկանկարներով, (ճիշտ այնպէս՝ ինչպէս սօ-
դայի ջուր վաճառելու տնակներում)։ Մի կող-
մից պալատի պատը միապաղաղ է, իսկ միւս
կողմից ունի մի լուսամուտ։

Վարագոյրի յետևում վիեննական աթոռի
վրայ նստած է Դալիլան, կապտագոյն զգեստ-
ով և հովհարը ձեռքին։ Նստած է նա և մեծ
մանկական աչքերով ուղղակի նայում է հա-
սարակութեան. ապա վեր է կենում և վարա-
գոյրի յետևից դուրս գալիս։ Վերջապէս նա
սկսում է երգել հիանալի բաս ձայնով։

Երգում է նա այն մասին, թէ ինչպէս
գրաւէ Սամսոնին իւր հմայիչ գեղեցկութեամբ,
որպէսզի դուրս քաշէ նրանից նրա զարմանա-
լի ոյժի գաղտնիքը։

Դալիլան մի փոքր դժուարութեամբ է
շարժւում երկար զգեստի և շրջազգեստի եր-
կաթեայ օղերի մէջ. բացի սրանից նա բոլո-
րովին չգիտէր, թէ ինչ անէ հովհարը։

Ալիքանման խոպոպները, որոնք թափ-
ւում են նրա ճակատի և ուսերի վրայ՝ էլ
աւելի են սաստկացնում շոգը, որ պատճա-
ռում է նորան այնքան հանդիսականների ու-
շադրութիւնը։ Նրա բաս ձայնը դողդողում է,
և նա կանացի քնքոյշ կոկորդին բոլորովին
անսովոր նօտաներ է վերցնում, կապոյտ աչ-

քերում երևում են յուզմունքի արտա-
սուքներ։

Շիմշելը երբէք նրա նման գեղեցիկ կին
տեսած չէ։

Բեմ դուրս գալով, տեսաւ նա արդեօք
Դալիլային նրա իսկական դրութեան մէջ։—
Ցայտնի չէ։ Ես յետոյ լսեցի, որ Մէյերի կար-
միր այտերի, կապոյտ աչքերի և ալիքանման
խոպոպների փոխարէն՝ Շիմշելը տեսնում էր
սև, ծանր հիւսով պսակուած թուխ-գու-
նատ դէմք, որ նայում էր նորան աստղերի
նման վառուած երկու աչքերով։

Նա տեսնում էր այդ սև աչքերում ան-
յաղթելի կրքի բոլոր տաքութիւնը, իսկ նրա
առաջ կանգնած պատկերը վայելչահասակ էր,
ճկուն, և նրանից, ինչպէս միջօրէի արեգակից
հրաշէկ դարձած երկնքից՝ բուրում էր արևե-
ելքի հեշտասիրութիւնը։

Այն, ինչ որ զգում էր այժմ Շիմշելը՝
նա դեռ երբէք չէր զգացել և չէր էլ կարող
նրա անունը տալ. բայց երբ մօտեցաւ իւր ա-
ռաջ կանգնած հրաշալի տեսիլին, երբ սկսեց
երգել՝ նրա ձայնն այնպէս քնքոյշ էր հնչ-
ում, այնպէս ջերմ աղերսով, որ Դալիլան
զարմանքից չռեց իւր աչքերը և մեկնեց նո-

բան իւր ձեռքը աշկարայ յուզմունքով։ Շիմշելը արագութեամբ բռնեց հրաշագեղ փղշտացուհու ձեռքը, սեղմեց իւր սրտին և դրոշմեց նրա շրթունքներին մի այնպիսի համբոյր, որ Դալիլան բոլորովին յուզուելով՝ դուրս պրծաւ նրա գրկից և ընկաւ վիեննական աթոռներից մէկի վրայ, որոնք դրուած էին նրա պալատի պատշգամի առաջ։

Մի փոքր ուշքի գալով՝ Շիմշելը նստեց մի աթոռի վրայ։ Սկսուեց դուէտը։ Այդ դուէտում վճռւում էր Սամսոնի բախտը։ Նա ծածկամիտ էր, բայց Դալիլան իզուր չէր գործ դնում բոլոր իւր հմայքը։ Սամսոն նրա առաջ կանգնած իզուր էր աղերսում. «Այդ քո գործը չէ»։ Դաւաճան կինը շատ լաւ գիտէր, որ այս գործում խառն են իւր շահերը, և այնքան ժամանակ երգեց բաս ձայնով—Շիմշելը բասի փոխանակ լսում էր հրաշալի մէցցո-սոպրանո,—այնքան ժամանակ չռեց նրա վրայ իւր կապոյտ աչքերը,—Շիմշելը, փոխանակ այդ աչքերի, տեսնում էր երկու սև վառուող ադամանդներ,—մինչև որ կռուից յոգնած՝ նա ձեռք առաւ իւր խիտ մազերը և երգեց. «Դրանց մէջն է իմ ոյժը»։

Դալիլան վեր կացաւ, յաղթական ձևով բաց արեց հովհարը, ուղղեց ճակատին խըռ-

նուած մազերը, սրբեց քրտինքի խոշոր կաթիլները կարմրած ճակատից, թքեց դէպի մի կողմ և ձեռք տուեց յաղթուած հսկային։

Նոր համբոյր է ստանում Մէյերը, նոր երկիւղ է տիրում նորան. նա չէ կարողանում հասկանալ, թէ ինչու Շիմշելն այդպիսի կըրքով է գրկում նրա իրանը, այդպէս պինդ է սեղմում շրթունքները նրա շրթունքներին։ Ապա սիրահարուած զոյգը ծածկւում է դաւաճան կնոջ պալատի խորքում, ծաղկանկարներով զարդարուած վարագոյրների յետևում։

Երևում են փղշտացիները։ Սա ի՞նչ բան է. նոյն անձինքն են՝ որոնք երրորդ գործողութեան մէջ ընկան Սամսոնի ձեռքից։

Աւելի ևս մեծ ատելութիւն պիտի զգան նրանք դէպի իրանց սպանողը։ Նրանք սպասում են Դալիլային, թագնւում են պալատի դռների յետևում, ներս են նայում լուսամուտներից և իրար խորհրդաւոր նշաններ են անում...

Բայց ահա և Դալիլան։

Նա դուրս է գալիս վարագոյրի յետևից, վարդագոյն մշտական հովհարը մի ձեռքին, և երկար սև մազերի մի ահագին փունջ միւս ձեռքին։ Փղշտացիներին աննկարագրելի ցընծութիւն է տիրում։ Ինքը, կայսրը, ի նշան

գոհունակութեան՝ սեղմում է Դալիլայի ձեռքը։ Ասպետները մերկացնում են սրերը և վրէժխնդրութեան աղաղակով յարձակւում են պալատից դուրս եկող Սամսոնի վրայ։ Սամսոնը ինքն իրան նման չէ. առանց սաղաւարտի, առանց մազերի, առանց սպիտակ վերարկուի. նա անձնատուր է լինում թշնամիներին, որոնք կուրացնում են նրան առանց այլևայլութեան։

Վարագոյրը իջնում է. դահլիճում սպառնալից գերեզմանական լռութիւն է տիրում, միայն խաւարի մէջ լսւում է հեծկլտանք...

Իզուր չեն արտասւում բարի հոգիները, թատրոնական հանդերձասենեակում նստած է Սամսոնը, մահուան գունատութիւն դէմքին և աչքերը փակած։

—Բաբբի՛, ասում է Մովշան, նայեցէք, ահա այն պալատը, որը դուք բեմի վրայ պէտք է խորտակէք .. Դուցէ նա չափազանց ծանր է ձեզ համար, չփոքրացնեմ։

Բայց Շիմշելի կրծքի մէջ փոթորիկ է եռում։—Թշնամիները խլեցին իմ աչքի լոյսը, վշտահար կերպով շշնջում է նա. ես կուրացայ և իմ աչքերը երբէք չեն տեսնի Յաբիտենականի արդար գործերը։

—Լսեցէք, ասում են իրար փղշտացիք և

նայում են միմեանց տարակուսուած հայեացքներով։—Նա կարծում է, որ մենք իսկապէս կուրացրինք նրան։

Այդ ժամանակ հանդերձասենեակից անցնում է Դալիլան։ Շիմշելը լսեց նրա շորերի խշշոցը և բարձրացրեց արտևանունքները։ Նրա աչքերը բարկութեան և յուսահատութեան շանթեր են արձակում, գունատ այտերի վրայ երևում է սաստիկ կարմրութիւն։

—Այդ ի՞նչ արիր ինձ, այդ ի՞նչ արիր։ Դու կորցրիր ինձ. շնորհիւ քո նենգաւորութեան ես կորցրի աչքերս և գերի ընկայ։

Նրա ձայնը աւելի և աւելի բարձրանում է. նա սեղմում է բռունցքները և յարձակւում Դալիլայի վրայ։ Գեղեցիկ փղշտուհին վախենում և փախչում է սենեակի հեռաւոր անկիւնը, ուր ծածկւում է հրէից ծերերից մէկի երկար ծաղկաւոր խալաթով։ Մովշան նոյնպէս ծածկում է նրան իւր լայն կրծքով. նա չէ կարողանում ձեռք բարձացնել զիտնական մարդու վրայ և միայն յուսահատ ձայնով կրկնում է։

—Բաբբի՛, ա՛յ, վա՛յ, բաբբի։

Շիմշելի զայրոյթը սակայն շատ կարճ է տևում և փոխւում է խոր և անկեղծ վշտի։

Նա ընկնում է նստարանի վրայ, ծածկում է աչքերը և սկսում է հառաչել։

—Օ՜, ես նայում էի քո դէմքին՝ ինչպէս բոց, և իմ ամբողջ սիրտը հալւում էր նրա առաջ, և դու ինձ կորցրի՞ր։ Կորայ ես, Դալիլա՛, կորա՛յ, կորա՛յ։

Բայց կուրացած հերոսի գանգուրների վրայ այլևս ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում բացի Դալիլայից, որ իւր գլուխն ազատելով խոպոպներից և վարդերից՝ շփոթուած նայում է նորան։

Բեմի վրայ բարձրանում է մի պալատ, բայց ոչ այն, որ կար նախորդ գործողութեան ժամանակ. սա կազմուած է երկու կարտոնէ սիւներից, որոնք վերևում միացրած են կարտոնէ սիւներով։ Սիւների մօտ փղշտացիք խընջոյք են անում, ուրախանում, երգեր են երգում և իրանց ուրախութիւնը կատարեալ դարձնելու համար՝ հրամայում են բերել կուրացած գերին։ Սամսոնը երկու զինուորների հսկողութեամբ գալիս է, աչքերը ծածկուած, բայց անվախ և սաստիկ տխուր։

Դուք, իհարկէ, նկատեցիք, թէ ինչպէս այս մի ժամում գունատուել է նրա դէմքը։ Գունատ այտերը խոր են գնացել, իսկ փակած աչքերը եզերուած են մուգ շրջագծերով։

Այո՛, ես համաձայն եմ ձեզ հետ, որ այդ դէմքը կրում է իւր վրայ յուսահատութեան, ատելութեան և վշտի դրոշմը։

Փղշտացիք ծիծաղում, կատակ են անում, պատմում նրա հայրենիքի աւերածութիւնը. իսկ նա, գերին, կոյրը, անզօր հսկան, չէ կարող այլևս նրան պաշտպանել։

Իզուր են արտասուում հրէից ծերունիները, իզուր հրէից կանայք իրանց ողբերով լցնում են օդը, իզուր քաջ տղամարդիկ իրանց արիւնով ողողում են աւերուած Հրէաստանի ճաիւնը։ Սամսոնն այլևս չի պաշտպանի հայրենիքն իւր կուրծքով. զրկուած բոլոր ոյժերից՝ չէ կարող ազատութեամբ տիրել թշնամիներին. նրա աչքերը պատած են յուսահատական խաւարով։

Շիմշելը լսում է կատակները, ծաղրը, թշնամիների սնապարծ պատմութիւնները, և քիչ-քիչ բարձրացնում է գլուխը։ Ձողափայտով և անհաստատ քայլերով մօտենում է սիւներին և կանգ առնելով՝ սկսում է երգել։

Ի՜նչ խոր ցաւ է զգացւում նրա ձայնի մէջ, ի՜նչ վշտոտ ձայներ են թռչում նրա կրծքից։ Նա խնդրում է Եհովայից ոյժ, իւր նախկին ոյժը։ Նա տենչում է ունենալ այն ոյժը մի րոպէ միայն, մի ակնթարթի տևողութեամբ։

Նա վեր է բարձրացնում իւր դողդողջուն ձեռները և տանջանքով խեղաթիւրուած դէմքը։

Յիրաւի այժմ, երբ նա կանգնած է կարտօնէ սիւների մէջ, լուսաւորուած այն լամպով, որ փղշտացիներից մէկը բռնել է հէնց նրա դէմքի առաջ՝ Շիմշելը նման է «միլիոնների վշտով» տանջուող մարտիրոսի։

Լամպը (որ երևի բռնել էր պատկերներն աւելի լաւ լուսաւորելու համար), սարսափելի այրում է նրա այտը։ Նա յետ է մղում լամպը բարկացած, եռանդոտ շարժումով երկու ձեռքով բռնում է սիւները, ցնցում է և փսել է բերում փղշտացոց վրայ. նրանք ճչալով գետին են թափւում։

Սպանուած են բոլորը, սպանուած է և Սամսոնը։ Սպանուածների մարմիններն ընկած են պալատի աւերակների տակ։ Վարագոյրն իջնում է. հասարակութիւնն սկսում է կատաղի կերպով ծափահարել։

Բարձր և ստորին շրջանները, թէ լուսաւորուած և թէ խաւարի մէջ ընկղմած նրստարանները, ամենքը միանում են մի զգացմունքով, ծափահարում են, ծիծաղում են, արտասւում, ողբում, դուրս են կանչում Սամսոնին, կայսրին, Դալիլային, հրէից ծերերին,

և ըէժիսսոր Ովսելը էլ չէ հակառակում դորան։ Թիկունքը յենած բեմի վանդակապատին՝ նա կանգնած է մռայլ, տխուր .. Ահա և տօնի վերջը, որի մասին նոյն-իսկ մտածելն երկու ամիս շարունակ՝ այնքան մեծ բազմազանութիւն էր մտցնում մի խումբ աղքատ մարդկանց միակերպ կեանքի մէջ։

Ներկայացումից յետոյ դերասանները, չը հանելով իրանց թատրօնական շորերը, հէնց հանդերձասենեակում խմում են երկու շիշ մեղրաջուր և երգում են ուրախ խմբական երգ։ Այդ երգով նրանք գնում են հարուստ վաճառականների և քարէ տների տէրերի բնակարանները։ Այնտեղ նորանց սպասում է առատ հիւրասիրութիւն. այնտեղ նրանք կպարեն, կերգեն և կուրախանան ամբողջ գիշերը և նրանց ձեռքը շատ արծաթէ դրամներ, շատ մանէթանոց թղթադրամներ կընկնեն, իսկ այնտեղից էլ կանցնեն աղքատների դրամարկղը, որն առանց այն էլ արդէն հարստացել է այսօրուայ ներկայացման արդիւնքով։

Շիմշելը չէ երևում այն խմբակի մէջ,

որ երգով և ծիծաղով դիմում է Բոզենդորֆ վաճառականի տունը։

Այնտեղ, ուր սահուն մայթերի վրայ ընկնում է իշխավառ լապտերների աղօտ լոյսը շարժւում է մի մարդու պատկեր։ Երբ նա հասնում է լապտերների սիւներին՝ նրանից թափւում են ծիրանի, ոսկու և ադամանդի ցոլմունքներ, որոնցով նա ամբողջապէս ծածկուած է. իսկ երբ ծածկւում է խաւարի մէջ՝ նրա երկար վերարկուն սպիտակին է տալիս, որպէս հսկայական թռչունի թեւեր։ Երևում է, որ այդ անձի համար ծանրը չէ իւր միայնութիւնը։

Նրա հաստատուն գնացքի մէջ ոյժ է զգացւում, իսկ կուրծքից դուրս են թռչում յաղթանակի, ուրախութեան երգեր։

Պալատի աւերակների տակ, ընդհանուր կոտորածից յետոյ, Շիմշելը մեռելներից յարութիւն առաւ, մոռացաւ բոլոր անարգանքները և տանջանքները, բայց ո՛չ մի րոպէ չը դադարեց «հզօր Սամսոն» լինելուց. ընդհակառակն, այժմ անցնելով մի փողոցից միւս փողոցը կիսով չափ լուսաւորուած կամ խաւար լուսամուտների առաջից՝ նա յիշում է իւր կատարած մեծ գործը և իրան ուրախութեամբ և հպարտութեամբ լցուած է զգում։

Ժամանակ առ ժամանակ նրա առաջ աղօտ կերպով փայլում է դաւաճան, անհաւատարիմ Դալիլայի պատկերը... և այն ժամանակ մի ինչ-որ վիշտ, մի ինչ-որ ափսոսանք ճմլում է նրա սիրտը, բայց նա իսկոյն մխիթարւում է իւր հայրենիքի, Հրէաստանի յիշողութեամբ, այն հայրենիքի, որը նա փրկեց արիւնից, արտասուքից և հրդեհից։ Այն ժամանակ նա բարձր բռնելով գլուխը՝ ժպտում է, երգում է աւելի բարձր, աւելի ուրախ և խաւար փողոցի անհարթ սալայատակի վրայով գնում է՝ ինչպէս դափնիների վրայով։

Շիմշելն այսպիսով անցաւ բուլվարը, թեքուեց դէպի մի նեղ փողոց։ Մեքենաբար, ըստ սովորութեան, նա քայլերն ուղղեց դէպի բնակարանը և չմտածելով, թէ ինչ է անում՝ ձեռքը դիպցրեց ցածր դռան սողնակին և կանգ առաւ իւր սենեակի շեմքի վրայ։ Մի քանի րոպէ մնաց նա անշարժ։

Սենեակում, սեղանի վրայ, լուսամուտի առաջ, վառւում էր լամպը և փչում դէպի առաստաղ գարշահոտ ձանձախարիթի հոսանք։ Աւելի հեռուն մոխրագոյն, ցած պատեր, մահճակալներ փետրալից դոշագներով, ամեն կողմ փռուած, կեղտոտ, պատառոտուն ըզգեստներ, քնած մարդկանց կերպարանքներ—

այս բոլորը կիսախաւարի մէջ խառնուում, կազմում էին մի վայրենի քաոս, որ բոլորովին անմատչելի էր Շիմշելի հասկացողութեան։ Միայն երկու-երեք րոպէից յետոյ նա կարողացաւ ուշքի գալ։

Անհետացաւ հրաշալի յափշտակիչ երազը, և նա հասկացաւ, որ ինքը Սամսոն չէ, հզօր հսկան, Աստուածաշնչի բանաստեղծական հերոսը, այլ պարզապէս Շիմշելն է, Հերշունիի որդին, ներկայ ժամանակների գիտնականը, որ անց է կացրել իւր կեանքի սկիզբը և պիտի անց կացնէ նրա մնացորդը այս նեղ, խոնաւ սենեակում, տքնելով երկար, անսահման երկար տողերով գրքերի վրայ։

Տարօրինակ բան։ Գիրքը տեսնելիս՝ Շիմշելի դէմքի վրայ դրոշմուեց անբաւականութիւն, համարեա զզուանք։ Նա գլուխը շուռ տուեց միւս կողմը։ Մի քանի դանդաղ քայլեր փոխեց և նստեց աթոռի վրայ։

Պարզ է, որ նա չէ կարողանում նայել գրքին։ Նրա յօնքերի մէջտեղում առաջ է գալիս խոր կնճիռ և ձգում է նրա ամբողջ դէմքի վրայ մռայլ, բարկացկոտ մտախոհութեան արտայայտութիւն։

Նա տեսաւ բոլորը, և՛ ուրախութիւն, և՛ բախտ, վիշտ կրեց, զոհ բերեց, տանջուեց և

յաղթանակեց։ Բայց այն մի միայն երազ էր, և այժմ նորան վիճակուում է վերադառնալ գրքի դեղնած թերթերին, դէպի անվերջ խոհերը, դէպի ծանր աշխատանքը։

—Ի՞նչ օգուտ դուրս կգայ սրանից ինձ համար և մարդկանց համար։ Նա մտածեց նաև մարդկանց մասին... Այժմ ի՞նչ անէ նա դէպի մարդիկ ունեցած այն ջերմ, անկեղծ սէրը, որ այնտեղ, թատրոնական բեմի վրայ, եռում էր Սամսոնի հզօր կուրծքի մէջ և մնաց այժմ Շիմշելի թոյլ կուրծքի մէջ։ Նա ի՞նչպէս արտայայտէ, ո՞ւր ուղղէ այդ սէրը։ Ի՞նչպիսի գործերով նա կկարողանայ յագեցնել այդ սիրոյ այրող ծարաւը։ Իսկ ի՞նչ անէ նա միւս սիրոյ նախազգացումը, սիրոյ, որ սիրուն Դալիլայի փայլուն աչքերը և ճկուն իրանը բորբոքեցրել էին նրա մէջ, այն ջերմ սիրոյ, որ բուն դնելով Սամսոնի մեծ սրտում՝ լցնում էր նրան արտասուքով և անտանելի վշտի հառաչանքներով։

Իդէալնե՞ր...

Սամսոնը դրանց անունները չգիտէր, բայց երբ միանգամ փայլեցին նրա աչքերի առաջ՝ նա կալաւ նրանց ամբողջ հոգով։ Նրա առաջ փայլեց մեծագործութեան, սիրոյ և փառքի իդէալը։ Օ, երբ այդ իդէալն անյայտացաւ,

ինչու համար այնպէս փոքրացաւ, չնչին դարձաւ նրա անպտուղ ճարտարահիւս գիտնականութեան միակ չոր իդէալը։

Նա գլուխը քաշ ձգեց և նայեց իւր ըզգեստին։

Տարօրինակ ժպիտ փայլեց նրա շրթունքներին։

Սամսոնի սպիտակ վերարկուն նրա ծունկներից ցած էր իջնում նուրբ ծալքերով։ Մանեակը լամպի լոյսի առաջ փայլփլում էր ծիածանի բոլոր գոյներով, սաղաւարտից քաշ էր ընկել ծանր գարգմանակը։ Շիմշելը ժրպտաց տարօրինակ, երկարատև ժպիտով, վերցրեց գլխից սաղաւարտը, դրեց սեղանի վրայ և երկար, երկար դիտում էր նրան վառուած աչքերով, որոնցից գլորուեցին երկու մեծ, ծանր արտասուքի կաթիլներ։

—Մնաս բարև, հզօր Սամսոն։ Մեծ մարդ, դու ինձ սովորեցրիր, որ աշխարհում կան մեծ գործեր, մեծ սէր դէպի մարդիկ, գեղեցիկ Դալիլաներ... և փոքրիկ, թոյլ, թշուառ Շիմշելներ։

Նա հասկացաւ, որ երբէք մեծ, իմաստուն, երջանիկ չէ եղել, և այնպէս սաստիկ սեղմեց բռունցքները, որ ոսկորները ճարճարտեցին։ Յետոյ հերթը հասաւ մանեակին։

Երկար ժամանակ Շիմշելը բռնել էր այն իւր առաջ, իսկ փայլուն հուլունքների ցանցից էլ աւելի պայծառ փայլում էին նրա սև, արտասուքով լի աչքերը։

—Մնաս բարև, հզօր Սամսոն, մնաս բարև, մեծ մարդ։ Այս ասելով՝ նա բարձրացրեց աչքերը. ձեռները մանեակի հետ ընկան նրա ծնկների վրայ։ Տարօրինակ տեսարան ներկայացաւ նրա աչքերին։ Սենեակի մռայլ խորքում սփռուած էին փայլուն կէտեր։ Այդ կէտերը մարդկային աչքեր էին և փայլում էին զանազան բարձրութեան վրայ, բայց նրանց տերերը բոլորովին ծածկուած էին խաւարի մէջ։ Բոլոր այդ վեց զոյգ աչքերը ուղղուած էին Շիմշելի վրայ և արտայայտում էին զարմանք, հրճուանք և ուրախութիւն։ Այն րոպէն, երբ նա ցած թողեց ծնկների վրայ ձեռները մանեակի հետ՝ բոլոր կէտերը—սև, կապտագոյն, մոխրագոյն, սկսեցին մօտենալ նորան, և բոլորովին վերևում վառուեցին դաձեալ երկու նորերը, պայծառ դեղնագոյն։ Սրանք կատուի աչքերն էին, որ նոտած էր վառարանի վրայ, նայում էր տանտիրոջն ու մռմռում։ Ներքևում տեղաւորուած էին բոլոր երեխաներն ու Ցիպան։ Շիմշելի գալու րոպէին նրանք քնած էին, բայց յետոյ զարթեցին և նրս-

տելով գետնին այնտեղ, ուր նրանց վրայ էր հասել քունը՝ հեռուից դիտում էին ամուսնու և հոր շքեղ հագուստը։

Վաղուց էին արդէն նրանք նստել շընչերը բռնած, որպէսզի չխրտնեցնեն ծիրանիներով և ոսկով պատած տեսիլը։ Ամենից առաջ խաւարից դուրս եկաւ Ցիպան և կամացուկ սողաց դէպի ամուսնու ծնկները։

Այստեղ նա նստեց գետնին, բարձրացրեց իւր թուխ, կնճռոտ դէմքը, որ եզերուած էր սև չամչիկի ծալքերով, խաչեց ձեռները և սիրով լի աչքերը յառեց ամուսնու դէմքին։

Նրա յետևից խաւարի միջից երևեցան Մէնդելի և Եսթերիկի բոցագոյն կարմիր գլուխները, Ենովքի նիհար, գունատ դէմքը և ամենից վերջը Լիբան խճճուած մազերով և Լէյզերին խտտած։

Բոլորը լուռ էին։

Շիմշելն էլ երկար ժամանակ լուռ էր և հերթով նայում էր իւր շրջապատողներից ամեն մէկին. վերջապէս բոլորի վրայ մի հայեացք ձգեց, արագութեամբ ծածկեց երեսը ձեռներով և լաց եղաւ դառն արտասուքով։

—Իմ խեղճ զաւակներ, օ՜, դուք իմ խեղճ ձկնիկներ, ադամանդներ,—դուրս թռաւ Շիմշելի ճնշուած կուրծքից.—ինչ պիտի անեմ

ես ձեզ համար, ինչ կարող եմ անել։ Ես ինքս աղքատ, թոյլ և այնպէս տգէտ, այնպէս յիմար եմ։ Դուք էլ կլինիք միշտ աղքատ, թոյլ և յիմար։

Յանկարծ նրա հառաչանքներն ու արտասուքներն ընդհատուեցին։ Նա վեր ցատքեց աթոռից, մօտեցաւ լուսամուտին և ընկսեց նայել խաւարին։

Այսպէս մնաց նա մի րոպէ և ահա... կրկին նրա առաջ ծրագրուեց ոսկեայ սանդուղքը, աստիճանների վրայ սփռուած հրեշտակներով և կատարին ունենալով սպիտակ, հեզ, փշով պսակուած հրեշտակը։

Շիմշելը շուռ եկաւ դէպի իւր ընտանիքը և Լիբայի ձեռքից խլեց փոքրիկ Լէյզերին։

Եթէ մէկը լուսամուտից ներս նայէր այս փոքրիկ աղքատիկ սենեակը, որ լուսաւորուած էր փոքրիկ լամպի լուսով՝ նրա աչքին կներկայանար հետևեալ օտարոտի տեսարանը։

Փոքրիկ սենեակի խորքում, ամենայետին շարքում, վառուում էին կատուի դեղին աչքերը։ Աւելի մօտիկ, խաւարի ֆօնից դուրս, երևում էին Լիբայի և Ենովքի գունատ զարմացած դէմքերը. էլ աւելի մօտիկ Եսթերիկն

ու Մէնդելն էին իրանց չռած կապոյտ աչքերով. նրանց յետևում Ցիպան իւր չամչիկով և ձեռները կուրծքին խաչած. իսկ լուսամուտին բոլորովին մոտ, սև մազերով, կարմիր զգեստով, վայելչահասակ հրէան դէպի երկինքը բարձրացնելով իւր երկու տարեկան երեխային՝ գոչում էր աղերսալի ձայնով.— Սանդալֆօն, Սանդալֆօն, աղաչիր Եհովային, որ նա սրան դարձնէ «Հզօր Սամսոն»։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Именная, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4878